26 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2001 ՈՒՐԲԱԹ 195 (2399)

Azg

Azg armenian daily

Մեծ Սարգսյանը իր հայտարարությունը կրկնեց Թբիլիսիում

ԹԲԻԼԻՍԻ, 25 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Եթե, Աստված մի արասցե, ադրբեջանական բանակը ռազմական գործողություններ սկսի, դա կլինի նրա վերջին պարտության սկիզբը», այսպիսի հայտարարություն է այսօր Թբիլիսիում արել Հայաստանի պաշտպանության նախարար Սեծ Սարգսյանը: Նրա այս խոսքերը հնչել են ի պատասխան այն հարցի, թե «Ինչպե՞ս եք Դուք գնահատում Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւի այն հայտարարությունը, որ Բաքուն «կարող է ուժ գործադրել ղարաբաղյան խնդրի լուծման համար»: Սեծ Սարգսյանն ասել է, որ Ադրբեջանի կողմից ուժի գործադրման դեպքում «հայկական բանակն ի զորու է պաշտպանել երկրի ինքնիշխանությունը»:

Մ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

907-ը չվերացվեց, սակայն կորցրեց ուժը

Հերթական անգամ երկակի ստանդարտների քաղաքականություն

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Թեեւ Ադրբեջանը չի վերացրել Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի շրջափակումը, ԱՄՆ Սենատը, տեղի տալով նախագահ Բուշի եւ պետքարտուղար Փաուելի հորդորներին, ԱՄՆ նախագահին լիազորեց կասեցնելու Ազատության աջակցության ակտի 907 ուղղման գործողությունը: Հիշեցնենք, որ 907 ուղղումն ընդունվել էր տակավին 1992թ. եւ արգելում էր ԱՄՆ կառավարության ուղղակի օգնությունն Ադրբեջանին, քանի դեռ վերջինս չի վերացրել Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի շրջափակումը: Ուշագրավ է, որ Սենատի որոշումը համընկավ Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւի հերթական ռազմատենչ հայտարարությանը. վերջինս ԵԱՀԿ խորհրդարանական խմբի նախագահ Ադրիան Սեւերինի հետ Բաքվում կայացած հանդիպմանն ասել է, որ ԵԱՀԿ ՄԽ համանախագահները պետք է ղարաբաղյան հարցի կարգավորման նոր ընդունելի առաջարկ ներկայացնեն, հակառակ դեպքում Ադրբեջանը ԼՂ հարցը կլուծի ռազմական ճանապարհով:

Ըստ էության, 907-ը չի վերացվել, սակայն կորցրել է ուժը: Այսուհետ ԱՄՆ կառավարության ֆինանսական եւ ռազմական աջակցությունն Ադրբեջանին թողնվում է նախագահ Բուշի ողորմածությանը:

Հոկտեմբերի 24-ին ԱՄՆ Սենատը քվեարկել է Ադրբեջանին ԱՄՆ կառավարական օգնությունը սահմանափակող 907 հոդվածը մեկ տարով կասեցնելու օգտին: Սենատը հաստատել է հանրապետական Միչ Մակքոնելի ուղղումն այն մասին, որ 907-ը կարող է սահմանափակվել, եթե դա անհրաժեշտ է հակահաբեկչական գործողությունների իրականացման, ԱՄՆ բանակի եւ դաշնակիցների զինված ուժերի օդերեւութային պատրաստությունն ապահովելու եւ Ադրբեջանի սահմանային անվտանգությունն ապահովելու համար ու չի վտանգի Մինսկի խմբի գործունեությունն ու չի օգտագործվի Ադրբեջանի կողմից Հայաստանի Հանրապետության եւ Լեռնային Ղարաբաղի դեմ հարձակում սկսելու նպատակով: Փոփոխությունն ուժի մեջ է մինչեւ 2002 թ. դեկտեմբերի 31-ը, որից հետո նախագահ Բուշը կարող է երկարաձգել ժամկետը:

Սենատոր Մակքոնելի նախաձեռնությամբ Սենատը հաստատել է նաեւ Հայաստանի ռազմական կարիքների համար 4 մլն դոլար եւ կրթական ծրագրերի համար 600 հազար դոլար օգնություն տրամադրելու ուղղումը:

Տես էջ 4

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ

Նախագահը՝ տնտեսական ցուցանիշների եւ աղքատության գործոնների մասին

Կառավարության երեկվա նիստը նախագահում էր Ռոբերտ Քոչարյանը, որին նիստի ավարտից հետո ուղղվեցին բազմաթիվ հարցեր: Նախ նախագահն անդրադարձավ այս տարվա առաջին 9 ամիսներին արձանագրված տնտեսական ցուցանիշներին:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

– 9 ամիսները բավական լավ ցուցանիշներով ենք փակել: Տնտեսական աճը կազմել է 9,9 տոկոս: Սա մի թիվ է, որ Հայաստանը երբեք չի ունեցել իր անկախության ամբողջ ժամանակահատվածում: Կապիտալ շինարարության մեջ ունենք 17 տոկոսից, գյուղատնտեսության մեջ՝ 11 տոկոսից ավելի աճ: Արդյունաբերությունն աճ ունի: Փորձում ենք ակտիվ աշխատանքով այդ միտումը պահպանել, թեկուզ աշխարհում այլ կարգի գործընթացներ են: Պատերազմն Աֆղանստանում բերել է բիզնեսի դանդաղեցման: Իհարկե, սա չի կարող իր ազդեցությունը չունենալ նաեւ Հայաստանի տնտեսության վրա, բայց փորձելու ենք ակտիվ աշխատանքով նվազագույնի հասցնել այդ ազդեցությունը: Իմ կարծիքով, տնտեսական աճի տեմպերը մինչեւ տարեվերջ պահպանվելու են: Ինչ վերաբերում է քաղաքական գործընթացների ազդեցությանը տնտեսության վրա, ապա ես բազմիցս եմ արտահայտվել այդ մասին: Երկրի կայունությունը տնտեսական զարգացման առաջին երաշխիքն է: Եթե մարդիկ չեն հասկանում այս այբուբենը, նրանք պատկերացում չունեն, թե ինչ է տնտեսությունը, երկիրը եւ տնտեսական քաղաքականությունն ընդհանրապես: Այս հարցին փորձեմ փոքր-ինչ մանրամասն անդրադառնալ:

Տես էջ 2

Եվրախորհրդարանը զիջեց Թուրքիային

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ, 25 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ըստ թուրքական հեռուստակայանների, հոկտեմբերի 25-ին Եվրախորհրդարանը մերժեց Հայոց ցեղասպանության Թուրքիայի կողմից ճանաչումն իբրեւ այդ երկրի եվրամիությանն անդամակցելու նախապայման դիտելու դրույթը: «Կանաչների» անունից ցեղասպանության հարցով փոփոխության իրականացմանն ընդդիմախոսել է Դենիել Քոհն-Բենդիթը, որը բավարարվել է Թուրքիայում գործադրվող բարեփոխումների դանդաղկոտության շուրջ քննադատական հայտարարությամբ: Պահպանողականների անունից ելույթ է ունեցել Շարլ Պասկուան, որը պահանջել է Թուրքիային պարտադրել ճանաչել ցեղասպանությունը՝ նշելով, որ «իրենք դեմ են Թուրքիայի եվրամիություն ինտեգրմանը, եթե Անկարան չճանաչի Հայոց ցեղասպանությունը»: Եվրախորհրդարանը աջակցություն է հայտնել հայ-թուրքական հաշտության հանձնաժողովի աշխատանքներին:

ՀՅԴ Հայ դատի եվրոպական հանձնախմբի նախագահ Հիլդա Չոբոյանը «Ազատությանը» հայտնել է, որ ծեւակերպումները, որ իրենք ներկայացրել էին Եվրախորհրդարան իրենց «բարեկամների» միջոցով, չընդունվեցին: Մանավանդ ցեղասպանության ճանաչման եւ այդ առնչությամբ երկխոսության կարեւորության մասին առաջարկը մերժվել է ձայների 149 կողմ, 275 դեմ հարաբերակցությամբ: Քվեարկության վրա բացասական դեր են խաղացել միջազգային իրավիճակը եւ այլ պետությունների կողմից եղած չափազանց մեծ ճնշումները: Ըստ տիկ. Չոբոյանի, Լամանտուրի տեղեկագիրը շատ էլ նպաստավոր չէ Թուրքիայի համար, բայց պատգամավորները չեն ցանկացել առավել խիստ վերաբերվել Թուրքիային, նշելով, որ ներկայումս ԱՄՆ-ն ու եվրոպան որոշ չափով Թուրքիայի կարիքն են զգում:

Հարցն առայժմ փակված է որոշ ժամանակով, քանի որ նախ հավանական է, որ այս տարի ուրիշ տեղեկագիրներ էլ լինեն, իսկ Լամանտուրի ընդունված տեղեկագիրը տարեկան տեղեկագիր է եւ մոտ մեկ տարի հետո Եվրախորհրդարանի քվեարկությանը կներկայացվի հաջորդ տեղեկագիրը:

ՀՀ-ում ՌԴ դեսպանատունն առայժմ խուսափում է Գրիզլովի հայտարարությունը մեկնաբանելուց

Ենթադրվում է, որ ՀՀ-ում ՌԴ դեսպանատունը հարցումով դիմել է Մոսկվա՝ Ռուսաստանի արտաքին գերատեսչություն, ճշտելու մի քանի օր առաջ Բաքվում ՌԴ ՆԳ նախարար Բորիս Գրիզլովի հայտարարությունը: Բաքվի լրատվամիջոցները հիացմունքով էին մեջբերել Ադրբեջանի ՆԳ նախարար Ռամիլ Ուսուբովի հետ հանդիպումից հետո պրն Գրիզլովի հայտարարությունը, համաձայն որի իբր «Ադրբեջանին Ռուսաստանի քաղաքական աջակցություն ցույց տալու հարցերը կարող են քննարկվել, եթե պաշտոնական Բաքուն որոշի հակահաբեկչական գործողությունների դիմել Լեռնային Ղարաբաղում»:

«Ազգը» փորձեց ՀՀ-ում ՌԴ դեսպանատան համապատասխան պաշտոնյաներից ճշտել արդյոք նման հայտարարություն արե՞լ է պրն Գրիզլովը: Պատասխանը հետեւյալն էր. «Մենք նման տեղեկություն չունենք»: Ենթադրվում է, որ մինչեւ ՌԴ ԱԳՆ-ն ՌԴ ՆԳՆ-ից չճշտի պրն Գրիզլովի հայտարարության հավաստիությունը, ՀՀ-ում Ռուսաստանի դեսպանատունը որեւէ մեկնաբանություն չի տա:

Ռ. Հ.

Դեսպաններ Նավասարդյանը եւ Մարտիրոսյանը ազատվել են պաշտոնից

Նախագահ Ռոբերտ Քոչարյանը հոկտեմբերի 24-ին հրամանագիր է ստորագրել Արման Նավասարդյանին Լիբանանի Հանրապետությունում ՀՀ դեսպանի պարտականություններից ազատելու մասին:

Նախագահի նույն օրվա մեկ այլ հրամանագրով Ազատ Մարտիրոսյանն ազատվել է Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում եւ, համատեղության կարգով, Կորեայի Հանրապետությունում ՀՀ դեսպանի պարտականություններից:

ՊԱՏԵՐԱԶՄ

Ռամսֆելդը կասկածում է ԱՄՆ հաջողությանը

«Եթե նույնիսկ Աֆղանստանում Թալիբանի իշխանությունը տապալվի, ԱՄՆ հատուկ ծառայությունները կարող են եւ հաջողության չհասնել Ուսամա բեն Լադենին որսալու հարցում: Չափազանց դժվար է գտնել նրա տեղը եւ ոչնչացնել նրան: Չէ՞ որ աշխարհում կան մի շարք երկրներ, որոնք կարող են բեն Լադենին ապաստան տալ: Բացի այդ, բեն Լադենը շատ հարուստ է, ունի շատ համակիրներ, ովքեր պատրաստ են աջակցել նրան: Հենց այդ պատճառով ես վստահ չեմ, որ մենք հաջողության կհասնենք: Նույնիսկ եթե բեն Լադենը սպանվի, միջազգային ահաբեկչական ցանցը շարունակելու է գոյատեւել, նշանակում է ահաբեկչության խնդիրը չի վերացվելու», նման սենսացիոն հայտարարությամբ երեկ հանդես է եկել ԱՄՆ պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդը:

Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլերը Լոնդոնի «Դեյլի թելեգրաֆ» թերթին տված հարցազրույցում կարծիք է հայտնել, որ բեն Լադենը կապանվի ամերիկա-բրիտանական ռմբահարումներից կամ հատուկ ուժերը նրան կբռնեն իր որջում: Բլերն ասել է նաեւ, թե ինքը չի սպասում, որ բեն Լադենը կանգնի միջազգային դատարանի առջեւ:

Մեծ Բրիտանիայի վարչապետը Աֆղանստանում նշանակել է հատուկ բանագնացի՝ Պոլ Բեռնին, որը նախկինում եղել է Մեծ Բրիտանիայի դեսպանը Տաջիկստանում: Բեռնի խոսքերով՝ իր առաքելության նպատակն է սերտ հարաբերություններ հաստատել «Հյուսիսային դաշինքի» հետ. վերջինս ԱՄՆ-ին հորդորել է դադարեցնել ռմբահարումները նախքան մահմեդականների սուրբ ռամադան ամիսը, որը սկսվում է նոյեմբերի 17-ից: Պետքարտուղար Քոլին Փաուելը հայտարարել է, թե ռմբահարումները կարող են շարունակել ռամադան ամսվա ընթացքում, եթե մինչ այդ չհաջողվի հասնել իրենց նպատակին:

Հինգշաբթի ամերիկա-բրիտանական օդուժը սաստիկ ռմբահարումներ է ենթարկել Քաբուլից հյուսիս եւ Մազարի Շարիֆ քաղաքի Թալիբանի ուժերի դիրքերը:

ԱԶԳ

տեղական

ՀՈԱԿ ատենապետ Ռուբեն Միրզախանյանը երեկ Գյումրիում էր, ուր կուսակցական տոմսեր հանձնեց նորագիրներին եւ անցկացրեց կուսակցությանն անդամակցել ցանկացող ավելի քան 50 անձանց երդմնառության արարողությունը: Վերջիններս Գյումրի էին եկել իրենց բնակավայր գյուղերից ու քաղաքներից՝ Ախուրյանից, Մարալիկից, Մեծ Մանթաշից, Փոքր Մանթաշից, Զույգաղբյուրից, մասնակցում էին նաեւ գյումրեցիներ, ինչպես եւ՝ համակիրներ եւ աղգագա կուսակցականներ Մեծ Սեփասարից ու Չորաքանյուններով հաճոյանալ ժողովրդի որոշ մասին: Մենք այդ խնդիրը չունենք: Դուր գալու նպատակ չհետապնդելով մենք այլ բնույթի թելադրանքով ենք հիմնավորում մեր գործողությունները, այն է՝ ժողովրդի սոցիալական վիճակի, տնտեսական առաջընթացի, երկրի ներքին կայունության մտահոգությամբ»: ՀՈԱԿ ատենապետն անդրադարձավ նաեւ երկրի ներքաղաքական վիճակին առնչվող մի շարք հարցերի՝ ընդդիմության դիրքից ու գործելակերպից մինչեւ իշխանությունների դիրքն ու գործելակերպը,

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

«Ժողովրդի մասին մտահոգվելով՝ չենք ձգտում հաճոյանալ նրան»

Շրջակա գյուղերից եւ քաղաքներից Գյումրի էին եկել 5 տասնյակից ավելի բնակիչներ՝ անդամագրվելու ՀՈԱԿ-ին

կարիք (առաջիկայում ՀՈԱԿ-ն այս գյուղերում ունենալու է իր տարածային կառույցները): ՀՈԱԿ ատենապետին ուղեկցում էին Հանրապետական վարչության անդամներ Սիեր Սելիմ-Բախշյանը, Անտոն Փիլոյանը, այլ կուսակցականներ:

Ռուբեն Միրզախանյանի եւ կուսակցության նորագիր անդամների հանդիպումը տեղի ունեցավ Գյումրու Վ. Թեքեյանի անվան դպրոցում, որի դահլիճում էլ ՀՈԱԿ ատենապետը ելույթով դիմեց ներկաներին, պատասխանեց նրանց հարցերին, լսեց ու գրառեց նրանց հուզող խնդիրները: Ի դեպ, Վ. Թեքեյանի անվան դպրոցների թիվը հանրապետությունում հասնում է 5-ի, եւ կուսակցությունը հնարավորինս հովանավորում է դրանց:

Ռ. Միրզախանյանն անդրադարձավ կուսակցության վերջերս հրապարակած հայցարարությանը, ուր ՀՈԱԿ-ը տեղեկացնում է, որ առաջիկա նախագահական ընտրություններում աջակցելու է ներկայիս նախագահ Ռոբերտ Քոչարյանին: Այս հայցարարությունն իրարամերժ մեկնաբանությունների տեղիք էր տվել, ոմանք համարում էին, որ ՀՈԱԿ-ը վաղաժամ դիմեց այդ քայլին, պետք էր սպասել, ոմանք էլ համարում էին, որ առհասարակ չարժեր դիմել այդ քայլին եւ այլն: «Նման կարծիքներ էին հայտնում քաղաքական այն ուժերն ու անձինք, ովքեր նպատակ ունեն այսօրինակ մեկնաբանություններով հաճոյանալ ժողովրդի որոշ մասին: Մենք այդ խնդիրը չունենք: Դուր գալու նպատակ չհետապնդելով մենք այլ բնույթի թելադրանքով ենք հիմնավորում մեր գործողությունները, այն է՝ ժողովրդի սոցիալական վիճակի, տնտեսական առաջընթացի, երկրի ներքին կայունության մտահոգությամբ»: ՀՈԱԿ ատենապետն անդրադարձավ նաեւ երկրի ներքաղաքական վիճակին առնչվող մի շարք հարցերի՝ ընդդիմության դիրքից ու գործելակերպից մինչեւ իշխանությունների դիրքն ու գործելակերպը, վերլուծեց քաղաքական ուժերի վերջին ամիսների վերադասավորումների ու վերածեւումների պատճառներն ու նպատակը: Նա վերջին անդրադարձավ այն վտանգին, որ ներկայացնում են երկրի քաղաքական դաշտում հեշտությամբ ընդարձակվող ռեւանշիստական ուժերը:

Ներկաներից մեկն իր եւ մյուսների անունից մտահոգություն հայտնեց ՀՈԱԿ ատենապետին խոսելով այն մասին, որ մարդիկ իրենց սեփական երկրում վաղուց չունեն պաշտպանվածության զգացում. «Անարդարության փաստերն ու անպատիժության ներքին զգացումն ավելի ծանր են ազդում բոլորիս վրա, քան գործազրկությունը»: Ռ. Միրզախանյանը հաստատեց, որ Հայաստանի բնակիչներին, իրոք, պակասում է հենց պաշտպանվածությունը՝ բոլոր առումներով: Իսկ այդ պաշտպանվածության զգացումը բացակայում է, նրա կարծիքով, նախ եւ առաջ նյութական միջոցների սղության պատճառով: «Այս նյութական «սկարության» արմատները գցվել են շատ ավելի վաղ, երբ ժողովրդի ձեռքին եղած գումարներն ու խնայողություններն ինչ-ինչ խարդախությունների հետեւանքով յուրացվեցին փոքրաթիվ մարդկանց կողմից՝ նախորդ իշխանությունները ներկայացնող, եւ այսօր էլ այդ մարդկանց ձեռքին են, մինչդեռ երկրի բնակչության մեծ մասը մի կերպ գոյություն է քարշ տալիս», նշեց նա՝ շեշտելով, որ պետք է հնարավոր միջոցները ձեռք առնել, որպեսզի այդ գումարները դուրս չտարվեն Հայաստանից: ՀՈԱԿ ատենապետին դիմելով՝ ներկաները դժգոհեցին նաեւ, որ ամիսներ ի վեր չեն ստացել աշխատավարձ, ինչեցին այլ հարցեր եւս: Հարցերի մի մասը տրվեց Շիրակի մարզի դպրոցների ուսուցիչների կողմից եւ առնչվում էր կրթական համակարգում առկա թերություններին: Հավատի ավարտին Ռ. Միրզախանյանից տեղեկացանք, որ Գյումրու ՀՈԱԿ մասնաճյուղի անդամների թիվը ներկայումս գերազանցում է 150-ը:

Ա. ԲԱԲԱՅԱՆ

2002 թ. բյուջեն առանց SAC-երի

Երեկ կառավարությունում քննարկվեց այս տարվա բյուջեում փոփոխությունների կատարման հարցը: Ըստ Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրյանի, այս տարվա 7 մլրդ դրամ թերակատարման հետեւանքով 3-րդ եռամսյակում նախատեսված, բայց չկատարված ծախսերը տեղափոխվել են 4-րդ եռամսյակ: Դա հնարավոր է դարձել լրացուցիչ ստացված գումարների շնորհիվ: Կենտրոնական բանկը 4 մլրդ դրամ գումար ավելի է տրամադրել պետբյուջեին, քան նախատեսված է եղել, «հողի վաճառքից ավելի գումար է ստացվել» եւ այլն:

Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարը նաեւ որոշակի տեղեկություններ հայտնեց 2002 թ. պետբյուջեի քննարկած եւ կառավարության հաստատմանը ներկայացրած նախագծից: Եկող տարվա պետբյուջեի ծախսային մասը, ըստ նախնական տարբերակի, կկազմի 248 մլրդ դրամ, եկամտայինը՝ 217 մլրդ դրամ: Այս բյուջեի նորույթն այն է լինելու, որ դրա կատարումը չի կապվելու SAC վարկերի ստացման հետ: Վարդան Խաչատրյանը դա բացատրեց նրանով, որ սպասելով վարկին, պարտքեր ենք կուտակում: 1999-ին ունեցանք 27 մլրդ դրամ, 2000-ին 10 մլրդ դրամ: Երկու տարվա արդյունքում 20 մլն դոլար ստանալու համար 37 մլրդ դրամ պարտքեր էին կուտակվել:

Սակայն Հայաստանի իշխանությունները դեռեւս ամբողջությամբ չեն հրաժարվում այդ վարկերից: Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարը հույս հայտնեց, որ SAC-IV-ի երկրորդ տրանշն ամենայն հավանականությամբ կստանանք մինչեւ դեկտեմբերի կեսերը: Վերջին երրորդ տրանշը՝ 20 մլն դոլարը, որը պետք է ստացվի ԲԷՏ-երի սեփականաշնորհումից հետո, հավանաբար այս տարի չենք ստանա: Այն, ինչպես նաեւ SAC-V-ը ստանալու դեպքում կառավարությունը կուղղի դրանք նախորդ պարտքերի մարմանը: Ինչ վերաբերում է երկրի տնտեսական վիճակը բնութագրող գլխավոր ցուցանիշներից մեկին՝ համախառն ներքին արդյունքին (ՀՆԱ), ապա եկող տարի ակնկալվում է 6 տոկոս աճ: Երեկ Վարդան Խաչատրյանի արտահայտած հույսերից մեկն էլ այն էր, որ կբարձրացվեն ուսուցիչների աշխատավարձերը եւ կենսաթոշակները: «Որքան հնարավոր լինի», ավելացրեց վերջում նախարարը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Իսրայելի նոր դեսպանն է տիկին Քոհենին

Նախագահ Ռոբերտ Քոչարյանին երեկ իր հավատարմագրերն է հանձնել մեր երկրում Իսրայելի նորանշանակ դեսպան Ռիվկա Քոհենին /նստավայրը՝ Թբիլիսի/:

Փաստելով Հայաստանի շահագրգռությունը Իսրայելի հետ ակտիվ երկխոսության զարգացմամբ, Ռոբերտ Քոչարյանը հույս է հայտնել, որ դեսպան Քոհենի մասնակցությամբ մեր երկրների միջեւ արդեն իսկ ձեւավորված հարաբերություններն էլ ավելի կամրապնդվեն: Նախագահը նշել է, որ Իսրայել կատարած իր այցի ընթացքում առիթ է ունեցել ծանոթանալու այդ երկրի հաջողություններին: Դրանք բնութագրելով որպես տպավորիչ, նա ասել է, որ մի շարք ոլորտներում Իսրայելի փորձը կարող է օգտակար լինել նաեւ Հայաստանի համար: Զրուցակիցները քննարկել են հայ-իսրայելյան հարաբերությունների զարգացման հեռանկարը, նախանշել են այն հիմնական ուղղությունները, որոնք կարող են խթան լինել փոխշահավետ համագործակցության ընդլայնման համար: Մասնավորապես, ընդծվել է մշակութային կապերի ակտիվացման դերը: Հանդիպման ժամանակ անդրադարձ է եղել նաեւ մերձավորարեւելյան տարածաշրջանի իրավիճակին:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ

Նախագահը՝ տնտեսական ցուցանիշների եւ աղակայունացման գործոնների մասին

Սկիզբը էջ 1

Մենք շատ ավելի ակտիվ պետք է փորձենք աշխատել ներդնողների հետ, քանի որ աշխարհի ընկերությունները որոշակի սպասողական վիճակում են: Բազմաթիվ խոշոր ընկերություններ սնանկանալու եզրին են, նրանց կառավարությունները փորձում են օգնել հաղթահարելու այդ դժվար պահը: Այս համատեքստում իմ ակտիվ մասնակցությունը, կառավարության ավելի ակտիվ աշխատանքն ուղղված են պահպանելու Հայաստանի գրավչությունը ներդրումների համար: Այն կոչերը, որոնք աղակայունացնում են իրավիճակը Հայաստանում, ուղղված են մեր ամբողջ բնակչության դեմ, որովհետեւ հարվածում են երկրի տնտեսական այս դրական միտումներին:

– Ինչպե՞ս եք մեկնաբանում «Արարատցեմենտից» ներդնողի հրաժարվելը:

– Կարծում եմ, որ այս համատեքստը եւս կա: Պետք է պարզենք նաեւ՝ կողմնակի ազդեցություն եղե՞լ է, թե՞ չի եղել մեր հնարավոր ներդնողի վրա: Հնարավոր է, որ լրացուցիչ փորձ լիներ արված խանգարելու այս գործարքը, որը շատ շահավետ եւ հետաքրքիր գործարք էր Հայաստանի համար:

– Այս տարվա բյուջեի եկամուտները թերահավաքվել են: Ի՞նչ քայլեր են արվելու:

– Կառավարության նիստից հետո խորհրդակցություն եղավ հարկային եւ մաքսային մարմինների, էներգետիկայի առնչությամբ: Այս երկու ուղղություններն այսօր ամենակարեւորն են, եւ փորձում եմ ավելի ակտիվ զբաղվել դրանցով: Եթե մենք չվճարենք գազի դիմաց, վերջինիս ծավալները կնվազեն, ինչն ազդելու է մեր տնտեսական ցուցանիշների վրա: Եթե եկամուտները չհավաքենք, ապա պարտքեր կկուտակենք ներսում: Դա, անկասկած, կօգտագործվի տարբեր քաղաքական շահարկումների համար: Պետք է քաղաքական կամք դրսեւորենք: Բոլորի նկատմամբ անխտիր շատ խիստ վերաբերմունք է լինելու՝ թե՛ էներգետիկայի, թե՛ հարկային, թե՛ մաքսային բնագավառներում: Կիրառում եւ կիրառելու ենք նաեւ շատ լուրջ վարչարարական մեխանիզմներ:

– «Հոկտեմբերի 27-ի» գործի անջատված մասով որեւէ ձերբակալված կամ կասկածյալ չկա: Ի՞նչ գնահատական կտաք դրան եւ դատավարությանն ընդհարապես:

– Ես անջատված մասին ծանոթ չեմ: Ձեր հարցը կարող եք ուղղել զինվորական դատախազին: Այս հարցի շահարկումներն այնքան շատ են, որ ես չեմ ցանկանում միանալ այդ բանակին:

– Ինչպե՞ս կմեկնաբանեիք Հեյդար Ալիեւի ռազմատենչ հայտարարությունը:

– Դա առաջին հայտարարությունը չէր: Վերջին մի քանի ամիսներին Ադրբեջանում տարբեր պաշտոնյաներ նման կարգի հայտարարություններ անում են: Երեկ պաշտպանության նախարարը լրագրողներին ասել է իր պատասխանը: Այդ պատասխանը համաձայնեցված է ինձ հետ: Համարեմ, որ սա իմ պատասխանն է: Այդ համատեքստում կփորձեմ ավելի լայն մեկնաբանություն տալ՝ դա կապելով Հայաստանի խնդիրների հետ: Ըստ էության հնչում է սպառնալիք Հայաստանին ու Ղարաբաղին, եւ սովորաբար նման դեպքերում այլ երկրներում տարբեր քաղաքական ուժերն ու բնակչությունը համախմբվում են այդ սպառնալիքին դիմակայելու եւ պատասխանելու համար: Սա շատ պարզ տրամաբանություն է, եւ յուրաքանչյուր քաղաքացի իր բնազդով դա պետք է զգա: Հակառակ դեպքում երկիրն իսկապես կարող է վտանգված լինել: Ինչքան շատ փորձեր արվեն ներսում վիճակը աղակայունացնելու, այնքան ավելի են լինելու նման կարգի հայտարարությունները մեր հարեւանների կողմից: Որքան շատ մարդիկ հավաքվեն նախագահի դեմ ուղղված հանրահավաքներում, որը նաեւ զորքերի գերագույն հրամանատարն է, այնքան, կրկնում եմ, ավելի կլինեն նման հայտարարությունները: Իմ տպավորությունն այն է, որ այս զուգադիպությունը պատահական չէ:

Վաղը (այսօր) ես այցելելու եմ Լոռու մարզ: Ծանրաբեռնված այցելություն է: Լինելու են հարցեր՝ կապված աղետի գոտու վերականգնման, արդյունաբերական հզորությունների վերագործարկման հետ: Հետաքրքիր ծրագիր է լինելու: Հանրահավաքները տվյալ դեպքում չեն կարող ինձ շեղել այդ կարգի ծրագրերից: Մտահոգությունս մեր ներսում քաղաքական կուլտուրայի մակարդակին է վերաբերում: Շատ պարզ, շատ հասկանալի իրավիճակներից շատերը տրամաբանական եզրակացություններ չեն անում: Բայց կյանքը գնում է, ես գոհ եմ մեր տնտեսական ցուցանիշներից եւ հույս ունեմ 2001 թ. փակել եւս լավ ցուցանիշներով: Ես խոսացել եմ նոյեմբերի վերջին տեղեկություններ հրապարակել աշխատատեղերի վերաբերյալ, եւ դա լինելու է:

– Եթե ընդդիմությունն ուժեղանում է, կարո՞ղ ենք ասել, որ իշխանությունն էլ է ուժեղանում:

– Իսկ ո՞վ ասաց, որ ընդդիմությունն ուժեղանում է:

– Տարբեր ուժեր միանում են, հանրահավաքներ են տեղի ունենում:

– Եթե այդ ուժերին միավորում է չարությունը, ապա այդ ուժերը չեն կարող ուժեղ լինել: Համենայն դեպս, ես որեւէ ընդհանուր ծրագիր, բացի Քոչարյանի դեմ ուղղված հայտարարություններից, չեմ տեսնում:

Վարչապետը կվերադառնա 29-ին

ԵՐԵՎԱՆ, 25 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՍՐՄԵՆՊՐԵՍ: «Առողջական կամ այլ պատճառներով ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի հրաժարական կամ պատշանակություն չի սպասվում, եւ այդ, ինչպես նաեւ թեկնածուների, մասին խոսակցությունները պարզապես ավելորդ են», այսօր լրագրողներին հայտնեց ՀՀ կառավարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության պետ Սերի Հարությունյանը:

Ըստ ՀՀ կառավարության մամուլի խոսնակի, ուրբաթ վիրահատական միջամտությունից հետո բժիշկները վարչապետին արագ տեղաշարժվելու խորհուրդ չեն տվել: Նրա կարծիքով, վարչապետն իր պարտականություններին կանգնի հաջորդ շաբաթվա սկզբից: Իսկ ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրյանը տեղեկացրեց, որ կառավարության նախագահը Երեւան կվերադառնա հոկտեմբերի 29-ին:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ՁԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Խմբագրատեղ՝ 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍՈՍՔԵԼԵԱՆ / հեռ. 529353
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայութիւն
/ հեռ. 529353
Apple Macintosh
համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական եւ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են: Համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

ՀԱՍԱՐՈՍ

Շարունակվում է «Հոկտեմբերի 27»-ի գործի դատաքննությունը

ԵՐԵՎԱՆ, 25 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հոկտեմբերի 27-ի դատաքննության այսօրվա նիստում շարունակվեց ամբաստանյալ Նաիրի Հունանյանի հարցաքննության արձանագրության հրապարակումը: Հիշեցնենք, որ ամբաստանյալին առաջինը հարցաքննել է մեղադրող Մարտիրոսյանը (հունիսի 13-ից՝ ուղղելով նրան մոտ 3000 հարց): Հոկտեմբերի 11-ին դատարանի հարցերին պատասխանելուց հետո, փաստորեն, ավարտվել է ամբաստանյալի հարցաքննությունը: Մոտ 7000 հարց ու պատասխանի հրապարակումը սկսվել է հոկտեմբերի 15-ից եւ 6-րդ նիստն է ինչ շարունակվում է: Դատաքննությունը կշարունակվի հոկտեմբերի 29-ին:

Գյուլագարակցի 13-ամյա պատանուն գտել են ծառից կախված

ՎԱՆԱՁՈՐ, 25 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Անհայտ կորած Զավեն Սուքիասյանի փնտրտուքը մոտ 20 օր տեւեց. 13-ամյա գյուլագարակցուն անտառի խորքում պատահաբար հայտնաբերեց անտառապահը, որի ահազանգով ժամանած «Լոռե» փրկարարական ջոկատը վայր բերեց 20 օր ծառից կախված մնացած դիակը: Հարուցված է քրեական գործ: Ինքնասպանություն է դա, թե ոչ՝ կպարզի նախաքննությունը:

Մի քիչ «զատառմոժենի ազնվության» խորհրդանիշը եւ նրա ընկերները

Ովքե՞ր են այսօր պահանջում նախագահի հրաժարականը, ամպագոռգող հայտարարություններ հնչեցնում եւ փորձում ապացուցել, թե իրենց գերագույն նպատակը մեր երկիրը բարգավաճ տեսնելն է: Այդ անձանց բարոյական նկարագիրը պարզելու համար ուղղակի անհրաժեշտ է մի փոքր լարել հիշողությունը. ազգի փրկիչներ ծեւացողները ոչ վաղ անցյալում կարեւոր պաշտոններ էին զբաղեցնում եւ, չգիտես ինչու, այդ ժամանակ չէին կարծում, թե գործող նախագահին անհրաժեշտ է պաշտոնանկ անել: Հակառակը՝ լռում եւ «ազգանրածային սնորաբաժանումն այդ պայմանագիրը չգրանցեց: Բայց Բագեյանը սկզբունքային է: 2000 թ. հուլիսի 26-ին նա իր նոր 894 որոշմամբ նույն տարածքը ատրակցիոններով եւ տաղավարներով հանդերձ, կրկին անհատույց հանձնում է նույն «Ուրախ ժամանց» ՍՊԸ-ին, իսկ վերջինիս հետ հաջորդ օրը՝ հուլիսի 27-ին կնքած պայմանագիրն այս անգամ գրանցվում է կադաստրում: Հետաքրքրական է, իսկ ո՞վ է «Ուրախ ժամանց» ՍՊԸ-ի տնօրենը: Երկար փնտրտուքի կարիք չզգացվեց: Նույն ինքը՝ «Հաղթանակ» զբոսայգու տնօրեն Թորոս Ումրիկյանն է: Սակայն



«Ուրախ ժամանցի» ամենաուրախ պահը Ումրիկյանի ներկայացրած ներդրումային ծրագիրն է, որը ոչ միայն երկկողմանի պայմանագրով ամրագրված չէ, այլեւ, ծանոթանալով այդ հրաշք փաստաթղթին՝ ակնհայտ է դառնում, որ նրա մեջ սահմանված չէ ներդրումների չափը, բացակայում են աշխատանքների սկսման-ավարտման ժամկետները, դրանց ծավալները եւ արժեքը: Այս ամենից հետեւում է, որ ծրագրի հեղինակը չի սահմանում որեւէ իրավական պատասխանատվություն:

Մեր սիրելի համաքաղաքացիներին մնացել է տպասելու ընդամենը 98 տարի (1 տարին անցավ, շնորհավոր լինի), որ վերջանա «Անգլիական այգու» 43215 քմ տարածքը «Բյուրակն» ՍՊԸ-ին վարձակալության հանձնելու ժամկետը: Պարոն Բագեյանի 2000 թ. հուլիսի 27-ի թիվ 909 որոշմամբ նշված տարածքի վարձակալական վճարը սահմանվել է 1 մլն դրամ, մինչդեռ այդ վճարի նվազագույն չափը պետք է լիներ տարեկան 1344,1 հազար դրամ:

Իրապես մեծ սիրտ ունի պրն Բագեյանը: Նրա օրոք 216 պայմանագիր է կնքվել Երեւանում տարածքների անհատույց տրամադրման վերաբերյալ:

Լավ է: Իսկական տիրոջ ձեռագիր է: Բայց ինչո՞ւ այդ պայմանագրերի գերակշիռ մասը վերաբերում է շահույթի նպատակ հետապնդող առեւտրային կազմակերպություններին եւ անձանց:

Պրն Ալբերտի որոշումներով անհատույց 62,2 քմ տրվել է «Վահե» ԼՏԸ-ին խանութի համար, քաղաքացի Ա. Մանուկյանին՝ 2140 քմ, 3810 քմ «Էսկոկոնցեռն» ՍՊԸ-ին եւ այլն, եւ այլն: Այնպես որ, հանրահավաքի մասնակիցներ, շատ վերադարձրեք պարոն Բագեյանին քաղաքալիքի աթոռը, կարող է ձեզ էլ մի բան հասնի:

Վերադառնանք գովազդին: Այո, շատ վերելակներ Երեւանի շենքերում այսօր էլ չեն աշխատում, պարոն Բագեյան, եւ մուրացկաններն էլ են մեծաթիվ: Բայց պատճառներից մեկն էլ այն է, որ դուք եք եղել մեր «բարի» քաղաքացին, դուք եք վատնել քաղաքին պատկանող նյութական միջոցները եւ չեք վերանորոգել քաղաքային տնտեսությունը: Դուք... Իսկ ազգահավաքներով մուրացկանի թիվը չի պակասի, հակառակը՝ կավելանա, հաստատ կավելանա, պարոն Բագեյան:

ՄԱՌԵՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԱՐՑԱԽ

Ճմռան շեմին ջեռուցման խնդիրը դարձյալ նույնն է

Հնարավոր է, որ առաջիկայում ԼՂՀ մուտք գործող բնական գազի ծավալը կրճատվի առնվազն 6 հազար խմով: Այդ մասին «Արցախգազի» ղեկավարությանը գրավոր նախազգուշացրել է «Հայռուսգազարդի» տնօրենությունը: Գազի մուտքի սահմանափակման պատճառն օգտագործված գազի պարտքն է, որի սույթ չափերի մասին «Արցախգազում» նպատակահարմար են համարում լռել:

Մեծ մասամբ գազաֆիկացված Ստեփանակերտում բնական գազն օգտագործվում է հիմնականում կենցաղային նպատակներով: Շատ քչերը (իհարկե, նաեւ ջերմային տնտեսությունը) կարող են շռայլություն թույլ տալ՝ օգտագործելով բնակարանների ջեռուցման նպատակով: Ինչպես ավանդաբար, այս տարի էլ Ստեփանակերտում եւ հանրապետության շրջաններում բնակարանները կջեռուցվեն փայտի վառարաններով կամ էլ էլեկտրական սալիկներով: Փայտ ձեռք բերելու միջոցներ բնակչությանն ընձեռում են «Արցախանտառ» պետական ձեռնարկությունը եւ լիազորված մասնավոր փայտավաճառները: Իսկ այդպիսիք քիչ չկան գյուղական բնակավայրերում, որոնց մատուցած վառելանյութը համեմատաբար էժան է:

Ինչ մնում է բնական գազի ներհոսին, ապա ԼՂՀ-ում ամենաբատը սպառող մայրաքաղաք Ստեփանակերտում աշնան այս ամիսներին գազի պահանջարկն օրական 16 հազար խմ է: Ճմռան ամիսներին պահանջվող գազի ծավալը պիտի հասնի 25 հազար խմ-ի:

Հաշվի առնելով մայրաքաղաքի բնակչության պահանջարկը, հանրապետություն մուտք գործող բնական գազի ծավալի կրճատվելու դեպքում փոխհատուցումը կկատարվի շրջաններին մատակարարվող գազի սահմանափակման հաշվին:

Սակայն դրանով կլուծվի՞ Ստեփանակերտի ամբողջական գազաֆիկացման խնդիրը, մանավանդ, երբ որոշ թաղամասեր դեռեւս կարոտ են երկնագույն կրակին: Պատասխանը միանշանակ բացասական է:

Կ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Գեղարքունիք. Պարարտանյութը քիչ էր, բայց էլի հույս է

Հոկտեմբերի 23-ին Գեղարքունիքի մարզպետարանում կայացավ ծաղոնական դրամաշնորհով ստացված ազոտական պարարտանյութի աճուրդվաճառք, որին մասնակցեցին 93 տնտեսվարող սուբյեկտներ, որոնցից 23-ը ֆերմերային եւ սերմնաբուծական տնտեսություններ, 70-ը՝ համայնքապետարաններ: Մեկնարկային գինը մեկ պարկի համար սահմանված էր 2300 դրամ, վաճառվեց 2350 դրամով, որի մեջ ներառված չէ ճանապարհածախսի գումարը: Վաճառվեց 1240 տոննա, որը չնչին քանակություն է մարզի գյուղատնտեսության համար: Մարզի պահանջարկը կազմում է 50 հազար տոննա:

Պարարտանյութը կուտակված է Գագարին համայնքի բազայում, որտեղից ներկրումը համայնքներ կսկսվի մեկ շաբաթից՝ պայմանագրերի կնքումից հետո:

Փաստորեն, մարզին հատկացված 1240 տոննա պարարտանյութը չի կարող բավարարել գյուղատնտեսության պահանջարկը, սակայն մինչեւ ամառ բավականին ժամանակ կա, եւ գյուղացիները պարարտանյութի նոր խմբաքանակի ստացման հույս ունեն: Իսկ եթե լրացուցիչ չհատկացվի, եղածն էլ հույս է:

ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Քաղաքական ուժերը պատրաստ չեն համագործակցելու իշխանությունների հետ

Հայաստանի գրեթե բոլոր քաղաքական ուժերը համոզված են, որ սեպտեմբերի 11-ից հետո աշխարհում ուժերի նոր վերադասավորման գործընթաց է, եւ յուրաքանչյուր երկրի առջեւ օրախնդիր է դարձել սեփական անվտանգության ու շահերի համատեղումն աշխարհաքաղաքական գործընթացներին: Այս շրջանակներում Շիրակ կատարած այցի ընթացքում հանրապետության նախագահը նշեց, որ Հայաստանի քաղաքական դաշտն իշխանությունների շուրջ համախմբվելու փոխարեն հակառակն է իրագործում: Սակայն այս պահին կա՞ն արդյոք Հայաստանի ազգային եւ պետական անվտանգությանը սպառնացող երեւույթներ՝ քաղաքական շրջանակների ուշադրության առարկան է:

«Օրինաց երկիրը» որոշակի անհանգստացնող խնդիրներ նկատում է՝ կազմված Ադրբեջանի պաշտոնական շրջանակների կողմից պարբերաբար հնչող՝ ԼՂՀ-ում հակաահաբեկչական ռազմական գործողություններ սկսելու հայտարարությունների հետ: Կուսակցության անդամ Սերգո Երիցյանը համոզված է, որ անհրաժեշտ է քաղաքական կոնսուլտացիաներ անցկացնել եւ ընդհանուր դիրքորոշմամբ հանդես գալ, ինչպես դա եղավ ԼՂ կարգավորման մասին խորհրդարանական քաղաքական ուժերի համատեղ հայտարարություն հրապարակելու դեպքում: Այս տեսակետից ե՛ւ իշխանությունը, ե՛ւ քաղաքական ընդդիմությունը որոշակիորեն պիտի համախմբվեն:

Կոմկուսը շատ ավելի խորացված է տեսնում իրավիճակը: Ըստ կոմունիստ Խորեն Սարգսյանի, «պատերազմը մտել է մեր հողը», եւ ցանկացած նման դեպքում քաղաքական ուժերը միանշանակ պետք է համախմբվեն: Սակայն ոչ թե նախագահի կամ իշխանությունների շուրջ, այլ՝ ազգային պետականությունը պաշտպանելու եւ պահպանելու: Սակայն այս կոմունիստի մտքի թռիչքն այնքան սլացիկ է, որ նա կատարվող աշխարհաքաղաքական զարգացումներում փնտրում է նաեւ Հայաստանի «մասը» եւ հարց է տալիս՝ «այս ամենի մեջ կա՞ մեր մեղքը»:

Հատկապես այս միտքը զարգացնելով «Իրավունք եւ միաբանություն» կուսակցությունը, եթե անգամ որեւէ հակահայաստանյան զարգացումներ էլ նկատում է, ողջ մեղքը բարդում է հանրապետության նախագահի եւ նրա «ատաշնորհ» իշխանության վրա: Ինչ վերաբերում է այդ իշխանությունների հետ համախմբմանը, ապա Գեղամյանը համարում է, որ առաջին հերթին իշխանությունը պետք է երկրի անվտանգության պահպանության այնպիսի մի գաղափար հրապարակ հանի, որն ի զորու լինի համախմբելու բոլոր քաղաքական շրջանակներին: Սակայն թե ինչո՞ւ հենց իրենք ձեռնամուխ չեն լինում նման որեւէ գաղափարի մշակմանը, Գեղամյանն, իհարկե, չանդրադարձավ:

«Հայաստան» խմբի ղեկավար Մյասնիկ Մալխասյանը, որի գլխավորած քաղաքական միավորն այսօր արտահայտում է երկու՝ «Հանրապետություն» կուսակցության եւ երկրապահական թեւի դիրքորոշումները, համոզված է, որ վաղքար զարգացումների հնարավորության դեպքում, ուզենք թե չուզենք, համախմբվելու են բոլոր քաղաքական ուժերը: Եվ դարձյալ ոչ թե նախագահի կամ իշխանության, այլ պետականության պահպանման կոնկրետ գաղափարի շուրջ:

Իշխանություններին նույն նպատակներով միանալու անհրաժեշտություն է տեսնում Քաղաքացիների միության նախագահ, ԱԺ ազգությունաբերողների միություն խմբի ղեկավար Հմայակ Հովհաննիսյանը, ըստ որի Հայաստանի ապագայի ապահովումը կարող է լինել հենց այն գաղափարը, որին պետք է ուղղվեն համընդհանուր ջանքերը:

Բոլոր դեպքերում ակնհայտ է, որ գոնե այս պահին քաղաքական ուժերի դատողությունները Հայաստանին սպառնացող ուղղակի վտանգներին չեն առնչվում: Ակնհայտ է նաեւ, որ աշխարհաքաղաքական տեղաշարժերն անուղղակիորեն անդրադառնում են Հայաստանի վրա, որն իր աշխարհագրական դիրքից ելնելով բավականին արագ է ընդունում արտաքին ցանկացած բացասական եւ դրական ազդակ: Կա երեք հիմնական անկայունության միավոր, որ կարող են սպառնալ Հայաստանին: Առաջինը հակաահաբեկչական ակցիայի չարաշահումն է Ադրբեջանի կողմից, այդ շրջանակներում Լեռնային Ղարաբաղն ահաբեկչության կենտրոն դիտարկելը եւ ԱՄՆ-ի որոշակի օժանդակությունը՝ կապված 907 հոդվածի թուլացման հետ, արդեն իսկ հիմք են տալիս ադրբեջանական պաշտոնական շրջանակներին ԵԱՀԿ Մինսկի խմբին ուլտիմատում ներկայացնելու եւ ռազմատենչ դիրքորոշում որդեգրելու: Հենց նույն ահաբեկչության դեմ պայքարի շրջանակ վրաց-աբխազական կոնֆլիկտի վերջին սրման հետեւանքով զոհվեցին հայեր, որի հնարավոր շարունակությունը սպառնում է կոնֆլիկտի մեջ Հայաստանի ներքաշմամբ՝ չնայած Հայաստանում Վրաստանի հետ ձեռքբերված համաձայնություններին: Երրորդ ազդակը տնտեսական է, որի պտուղները Հայաստանը զգաց դեռ այն ժամանակ, երբ երկիր դոլար չմտնելու հետեւանքով դրամային փոխարժեքը անկում արձանագրեց: Ավելորդ է քվարկել, թե ինչ տեղի կունենա, եթե միտումը շարունակական դառնա:

ՋՈՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Ամերիկայում

Հոկտեմբերի 20-ին «Ազգը», անդրադառնալով ԱՄՆ-ի հայամետությանը, 907 հոդվածի չարչրկումների պատճառաբանությամբ դա խորհրդանշական էր համարել: Ինչ վերաբերում է չարչրկումներին, ապա դրանք պայմանավորվել էին «հակաադրբեջանական» քայլը հակահայկականով հավասարակշռելու պատշոնական Վաշինգտոնի նկրտումներով:

Չնայած Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի բուռն ջանքերին, Միացյալ Նահանգների հայկական 17 ազգային, հասարակական եւ կրոնական կազմակերպությունների 907 հոդվածը պահպանելու խնդրանքով Սպիտակ տուն հղած նամակին եւ հայկական լոբբիի դիրքորոշումը պատշոնող կոնգրեսականների թվի աճին, հոկտեմբերի 24-ին Սենատը նախագահ Ջորջ Բուշին արտոնեց վերանայել հոդվածը:

Մինչդեռ 1992-ին Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի հարձակմանն ու շրջափակմանը հակադարձելու նպատակով ընդունված այս հոդվածը 1998 թ. սեպտեմբերին եւ 1999-ի հունիսին հաջորդաբար վերահաստատվել էր Սենատում եւ Ներկայացուցիչների պալատում: Դրա վերանայումը ենթադրում էր Կոնգրեսին նախագահի պատշոնական գերկուցումը, որտեղ նա համոզիչ փաստարկներով պետք է ապացուցեր, որ Ադրբեջանը դադարեցրել է Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի դեմ ուժի գործադրումն ու հրաժարվել շրջափակումից:

Շրջափակումից Ադրբեջանի հրաժարվելու մասին խոսք լինել չի կարող, իսկ ուժի գործադրումը նա ոչ թե դադարեցրել է, այլ Հայաստանի նկատմամբ ակնհայտ ագրեսիվ կեցվածք է ընդունել: Խոսքը տվյալ դեպքում Հայաստանը որպես ահաբեկչական երկիր ներկայացնելու, նրա դեմ, այսպես կոչված, հակաահաբեկչական գործողություններ ծավալելու Բաքվի իշխանությունների պատասխանեց ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի նախագահ, պատշոնության նախարար Սերժ Սարգսյանը, նախազգուշացնելով, որ եթե Ադրբեջանը փորձի նման միջոցներով ԼՂՀ հիմնահարցը լուծել, դա կլինի նրա «վերջնական պարտության սկիզբը»: Բայց եւ այնպես ԱՄՆ-ի Սենատի եւ նախագահ Բուշի համատեղ ջանքերով ստեղծվեցին 907 հոդվածի վերանայման անհրաժեշտ նախադրյալներ: Այսպիսով Միացյալ Նահանգները, Ադրբեջանի արտգործնախարար Վիլայեթ Գուլիեւի պատկերավոր կանխագուշակումով, կարտարեց «Ադրբեջանի նկատմամբ անարդար վերաբերմունքի փոփոխության» հերթական քայլը:

Օրերս նախագահ Ալիեւի աշխատակազմի արտաքին հարաբերությունների բաժնի ղեկավար Նովրուզ Մամեդովը եզրակացնում էր, որ 907 հոդվածը կորցրել է Ադրբեջանի համար տնտեսական եւ քաղաքական նշանակությունը: Այլ կերպ, հոդվածով Ադրբեջանն իրականում որեւէ խոչընդոտ չէր բախվում: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հոդվածի ուժի մեջ լինելը ոչ մի կերպ չի խոչընդոտել Ադրբեջանին շրջափակել Հայաստանը, նրա նկատմամբ ագրեսիվ կեցվածք ընդունել եւ ռազմատենչ հայտարարություններով կառչել ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուժային մեթոդներից, անհնար է կասկածի ենթարկել հոդվածի առնչությամբ Մամեդովի խոսքերի ճշմարտացիությունը:

Սակայն կա մեկ այլ ճշմարտություն: Դա 907 հոդվածի առկայությամբ Հայաստանին տրամադրվող ամերիկյան մարդասիրական օգնության մշտական կրճատումն է եւ փոխարենը Ադրբեջանին տրամադրվողի մշտական աճը: Սա նշանակում է, որ այդ հոդվածը, ի տարբերություն Ադրբեջանի, Հայաստանի համար ոչ թե նշանակություն է կորցրել, այլ որպես այդպիսին, տնտեսական կամ քաղաքական նշանակություն երբեք չի ունեցել: Այսինքն, հոդվածի վերանայմամբ Հայաստանը ոչինչ չի կորցնում, բայց որ Վաշինգտոնն այդ հոդվածով հայամետության մտավարժանքներ կատարելու, առավել եւս այդ մտավարժանքներով իր ադրբեջանամետ քաղաքականությունը հավասարակշռելու հնարավորությունից զգալիորեն զրկվում է, չի կարելի հերքել:

Ուրեմն չկա չարիք առանց բարիքի: Մնում է կռահել, թե ԱՄՆ-ը 907 հոդվածի փոխարեն հայամետության ինչպիսի դրսեւորում կցուցաբերի: Այդ հարցին միանշանակ չի կարելի պատասխանել: Ակնհայտ է, սակայն, անկախ այդ դրսեւորումների բնույթից, Միացյալ Նահանգները իր ադրբեջանամետ դիրքորոշումը հավասարակշռելիս նշարը միշտ Ադրբեջանի կողմն է թեքելու:

ՀԱՅՈՒ ՉԱՔԲՅԱՆ

Որքան էլ ԱՄՆ-ը հակակշռի իր քաղաքականությունը, ծանրության նժարը միշտ Ադրբեջանի կողմն է թեքելու

Գիտաժողովում կներկայացվեն Կարսը եւ Անին

Ռիչարդ Հովհաննիսյանի եւ UCLA-ի հերթականը

25 ՀՈԿՏԵՄԲԵՐ, UCLA: Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի պետական համալսարանի (UCLA) նախաձեռնությամբ անցկացվող պատմական Հայաստանի քաղաքներին ու գավառներին նվիրված միջազգային հերթական 9-րդ գիտաժողովում կներկայացվեն Կարսը եւ Անին: Այդ առիթով համալսարանի Դիքսոն դահլիճում նոյեմբերի 10-11-ը կհավաքվեն Հայաստանից, Արգենտինայից, Ֆրանսիայից, Մեծ Բրիտանիայից, Կիպրոսից, Իսրայելից եւ ԱՄՆ-ի տարբեր համալսարաններից հրավիրված բազմաթիվ հայագետներ: Գիտաժողովի թեման ընդգրկում է հանրահռչակ պարսպապատ Անի քաղաքի ու շրջակա Շիրակի դաշտավայրի, ինչպես նաեւ Վանանդ գավառի Կարս միջնաբերդի պատմությունը, արվեստն ու ճարտարապետությունը, լեզուն ու գրականությունը, հնագիտական-մարդաբանական տվյալները՝ միջնադարից մինչեւ մեր օրերը:

Գիտաժողովի կազմակերպիչը UCLA-ի արդի հայոց պատմության ամբիոնի վարիչ, ՀՀ ակադեմիկոս, պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանն է, հովանավորները՝ նույն համալսարանի հումանիտար գիտությունների բաժինը, միջազգային ծրագրերի եւ արտասահմանյան հետազոտությունների բաժինը, պատմության ֆակուլտետը եւ Եվրոպական ու ռուսական հետազոտությունների կենտրոնը: Այս շարքի նախորդ գիտաժողովները նվիրվել են Վան-Վասպուրականին, Բաղեշ-Բիթլիսին, Տարոն-Մուշին, Ծոփք-Խարբերդին, Կարին-Երզրումին, Սեբաստիա-Սվազին, Տիգրանակերտ-Դիարբեքիրին եւ Եդեսիա-Ուրֆային, ինչպես նաեւ Կիլիկիային ու հայաբնակ Կոստանդնուպոլսին:

Գիտաժողովի երրորդ նիստը, որը տեղի կունենա նոյեմբերի 11-ին, կընթանա հայերենով: Կարսի վերաբերյալ զեկույցներով հանդես կգան ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի փոխտնօրեն Ատոմ Մելքոնյանը եւ նույն հաստատության աշխատակից Ռաֆայել Մաթեւոսյանը, իսկ Անիի մասին կբանախոսեն Փարիզի Սորբոնի համալսարանի դասախոս Ռայմոնդ Գեւորգյանն ու Սարգիս Բալմանուկյանը՝ Լոս Անջելեսից, որոնց բանավոր ելույթները կուղեկցվեն ճարտարապետական եւ հնագիտական տեսանյութերի ցուցադրմամբ: Հայերեն նիստ անցկացնելու մտահղացումը նոր չէ. այդ փորձը սկզբնավորվել է Կոստանդնուպոլսին նվիրված գիտաժողովի ընթացքում, որը բազում դրական արձագանքներ էր առաջացրել:

Մնացյալ՝ անգլերեն երեք նիստերի ընթացքում (10 եւ 11 նոյեմբերի) գիտաժողովի մասնակիցները կլսեն աշխարհի տարբեր համալսարաններից հրավիրված հյուրերին՝ Ռոբերտ Հյուսընը (Ֆրեզնո), Թոմ Գրինվուդ (Օքսֆորդ), Ջեյմս Ռասել (Հարվարդ), Ռոբերտ Թոմսոն (Օքսֆորդ), Քրիստինա Մարանչի (Վիսկոնսին), Թեո Մ. վան Լինտ (Լեյդեն, Նիդեռլանդներ), Դիանա Ֆավրո (UCLA), Կլոդ Մութաֆյան (Փարիզ), Թոմաս Սինկլեր (Կիպրոս), Քրիստոֆեր Ուոթեր (Լոնդոն), Ռուբինա Փիրումյան (UCLA), Ջոյս Ք. Բիվին (Երուսաղեմ):

Հայոց հինավուրց քաղաքների արդի շրջանը ներկայացվելու է հատուկ նիստում, որի ընթացքում իրենց նկատառումներն ու հետազոտությունները մասնակիցների դատին կհանձնեն Վեյն պետական համալսարանի դասախոս Դեյվիդ Քալոնը, Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի պետական համալսարանի ամբիոնի վարիչ Ռիչարդ Հովհաննիսյանը, Հարվարդ համալսարանի ներկայացուցիչ Ռոբերտ Գրիգորյանը, Բուենոս Այրեսի Սալվադոր համալսարանից՝ Վարդան Մաթեւոսյանը, Հարվարդ համալսարանից՝ Բերթ Վոքսը եւ UCLA-ից՝ Անահիտ Քեշիշյանը: Խորհրդաժողովի շրջանակներում Անիի եւ Կարսի շրջանի ճարտարապետական հուշակոթողների լուսանկարների ցուցահանդեսը պատրաստել են եւ կներկայացնեն Ռիչարդ եւ էնն Էլիզաբեթ Էլբերխտները (Դեյվիս, Կալիֆոռնիա):

«Սա տեսանյութական ազդու տարրերով հագեցած հատկապես հարուստ ծրագիր է, նշեց գիտաժողովի կազմակերպիչ, պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը, ներառում է նաեւ Անիի Սուրբ Փրկիչ եկեղեցու վերականգնման գեղարվեստական նախագիծը՝ «վիրտուալ» իրականության միջոցով»: Այն իրականացրել է UCLA-ից Դիանա Ֆավրոն՝ Ֆիլիպ Ստինսոնի եւ Ջուստինա Բանդոլի աջակցությամբ: «Շատ հետաքրքիր կլինի նաեւ Ջոյս Քյոսաբաբյան-Բիվինի զեկույցը՝ Կարակալայի եւ մոլոկանների հավատը որդեգրած հայերի մասին, որոնց հետնորդներից շատերն այժմ ապրում են Հարավային Կալիֆոռնիայում», ասաց Ռ. Հովհաննիսյանը,- «Մենք պատիվն ու առանձնահատուկ հնարավորությունն ունենք համակցելու չորս մայրցամաքների գիտնականների հավաքական գիտելիքներն ու փորձը»:

Հանրության համար գիտաժողովի մուտքն ազատ է: Միջոցառման մեկնարկից առաջ՝ նոյեմբերի 9-ին, Hilton Universal հյուրանոցում տեղի կունենա երեկույթ-տոնակատարություն Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի պետական համալսարանի հայագիտության սկզբնավորման 40-ամյակի, արդի հայոց պատմության ամբիոնի 15-ամյակի եւ պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանի հայագիտական 40-ամյա գործունեության առթիվ:

Գիտաժողովի ծրագիրը էլեկտրոնային փոստով կարելի է ձեռք բերել հետեւյալ website-ով՝ www.UCLAArmenian.org:

Շարքի հաջորդ գիտաժողովը տեղի կունենա 2002 թ. մայիսին եւ նվիրված կլինի Զմյուռնիա-Իզմիրին ու Սեւ ծովի ափամերձ տարածքի հայաբնակ շրջաններին՝ ներառյալ Պոնտոսը:

ԵՐԿԱԿԻ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ

907-ը չվերացվեց, սակայն կորցրեց ուժը

Սկիզբը էջ 1

Ադրբեջանի իշխանությունները, օգտագործելով սեպտեմբերի 11-ի ամերիկյան ողբերգությունը, դրան հաջորդած միջազգային իրադրությունը, ապա միանալով ԱՄՆ-ի հակաահաբեկչական արշավին (միացել է նաեւ Հայաստանը- Թ. Հ.), կարողացան համոզել Վաշինգտոնին վերանայելու 907 ուղղումը: Հոկտեմբերի 15-ին Սենատին ուղղած նամակում պետքարտուղար Ք. Փաուելը գրում է. «Ազատության աջակցության 907 ուղղման վերացումը թույլ կտա ԱՄՆ-ին անհրաժեշտ ռազմական օժանդակություն տրամադրել Ադրբեջանին, ինչը վերջինիս հնարավորություն կտա պայքարել երկրում գործող ահաբեկչական կազմակերպությունների եւ տարրերի դեմ»: Ենթադրվում է, որ «ահաբեկչական կազմակերպություններ» ասելով Փաուելը նկատի է ունեցել Ադրբեջանում հաստատված Ուսամա բեն Լադենի համախոհներին, մինչդեռ Բաքվի իշխանություններն «ահաբեկչական կազմակերպություններ» անվան տակ այլ բաներ են հասկանում: Ք. Փաուելի նախաձեռնությամբ Ֆլորիդայի Քի Վեսթ քաղաքում տեղի ունեցած Քոչարյան-Ալիեւ հանդիպումից հետո պատշոնական Բաքուն մի քանի անգամ պարտադրեցել է, որ եթե իրեն չհաջողվի ԼՂ հարցը լուծել խաղաղ ճանապարհով, ապա դա կանի ռազմական ճանապարհով: Պատշոնական Երեւանը, ի տարբերություն Բաքվի, մինչ օրս համաձայնիվ է մնացել ԼՂ հարցի կարգավորման Քի Վեսթում ձեռք բերված պայմանավորվածություններին: Հիշեցնենք նաեւ, որ նախքան Քի Վեսթի բանակցությունները, Փաուելի ղեկավարած գերատեսչությունն իր զեկույցում Հայաստանը համարել էր ագրեսոր պետություն, դարաբաղյան ուժերին՝ անջատողականներ:

ԱՄՆ-ը հերթական անգամ ոտնահարեց ժողովրդավարության տառը եւ ոգին՝ իր արտաքին քաղաքական իդեալներին հասնելու համար դիմելով երկակի ստանդարտների քաղաքականությանը: Վաշինգտոնը մի կողմից հայտարարում է, թե իբր պայքարում է եւ առաջնահերթ է անելու միջազգային ահաբեկչությունը, մյուս կողմից՝ պատրաստակամություն հայտնում ֆինանսական եւ ռազմական աջակցություն տրամադրել Ադրբեջանին, որը միջազգային ահաբեկչության անուղղակի աջակցողն է: Վաշինգտոնին մնում է պատրաստակամություն հայտնել միանալու Ալիեւի՝ ԼՂ հարցը ռազմական ճանապարհով լուծելու մտադրություններին, այսինքն՝ միանալ Բաքվի՝ «Դարաբաղի դեմ հակաահաբեկչական գործողություններին», եւ ամերիկյան ժողովրդավարության մասին մեր պատկերացումներն ամբողջական կլինեն: Հիշեցնենք, ԱՄՆ Դաշնային Հետաքննությունների դաշնային բյուրոյի տվյալներով 1998 թ. Քենիայի եւ Տանզանիայի ԱՄՆ դեսպանատների պայթեցումը, որը խլեց 224 մարդու կյանք, այդ թվում՝ 12 ամերիկացիների, ուղղորդվել է Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվից: Ադրբեջանն այն երկրներից է (ինչպես Թուրքիան, Վրաստանը), որն իր մայրաքաղաք Բաքվում ունի «Իչկերիայի Չեչենական Հանրապետության» ներկայացուցչություն, պետական մակարդակով հովանավորում է Ռուսաստանի դեմ ուղղված չեչենական ահաբեկչությունը:

ԱՄՆ հայկական 17 կազմակերպություններ հոկտեմբերի 23-ին նամակ էին հղել Սպիտակ տուն՝ նախագահ Բուշին խնդրելով պահպանել 907 ուղղումը, որպես ԱՄՆ-ի համար «մարտավարական նշանակության տարածաշրջանի կայունության գլխավոր երաշխիք»: Մինչ այդ՝ հոկտեմբերի 9-ին նախագահ Քոչարյանը նամակով դիմել էր Ջորջ Բուշին, մասնավորապես նշելով, որ 907-ի փոփոխությունը բացասական ազդեցություն կունենա ԼՂ հակամարտության խաղաղ կարգավորման վրա: «Մենք ծայրաստիճան հիասթափված ենք Սենատի գործողություններից», երեկ հայտարարել է Ամերիկայի հայկական ազգային հանձնաժողովի (ANCA) նախագահ Արամ Համբարյանը: 907 ուղղման առնչությամբ հայտարարություն է արել ԱՄՆ հայկական մեկ այլ խոշոր կազմակերպություն՝ Ամերիկայի հայկական համագումարը (AAA): Համագումարի հոգաբարձուների խորհրդի նախագահ Հրայր Հովնանյանը եւ տնօրենների խորհրդի նախագահ Վան Գրիգորյանը համատեղ հայտարարության մեջ գովաբանել են ԱՄՆ կառավարության ջանասիրությունը՝ 907 ուղղման վերաբերյալ հավասարակշռված որոշում ընդունելու մեջ:

Միջազգային

ԵՐԱԳԻՐ

ՄԱԿ-ը պատրաստվում է կառավարել Աֆղանստանը

Իսկ Փեշավարում ժողով են անում աֆղանները

Փեշավարի «Նիշտար հոլ» դահլիճում հոկտեմբերի 24-25-ը հարյուրավոր աֆղան երեւելիներ ննջարկում էին Աֆղանստանի ապագայի հարցերը: Համաժողովի կազմակերպիչը Աֆղանստանի ազգային իսլամական ճակատի նախագահ Սայեդ Ահմադ Ղայլանին է: «Ազգային հաշտության եւ միասնության» ժողովին մասնակցեցին փուշտու ցեղապետներ, հոգեւոր առաջնորդներ, մոջահեդ հրամանատարներ, միապետականներ, սակայն Քաբուլի վարչակազմի ներկայացուցիչները չեն բարեհաճել ներկայանալ: Ժողովում իր բացման խոսքում Ղայլանին հայտարարեց. «Այն թալիբները, որոնք ընդունում են հաշտության եւ ընդլայնված կառավարության մեր գաղափարները, պետք է անմիջապես գործի լծվեն: Նրանց համագործակցությունը համարում եմ կարեւոր»: Ինչպես նշում է «Լիբերասիոն» թերթը, ժողովի մասնակից փուշտու ցեղապետների մեծ մասը թեեւ դժգոհ է թալիբներից, բայց կասկածանքով է վերաբերվում նաեւ Հյուսիսային դաշինքին: Չնայած ամերիկյան օդուժի ռմբակոծումներին, թալիբները դեռ բավականաչափ ռազմական ուժ ունեն զինված խմբավորությունները ճնշելու համար: Ուստի փուշտու հրամանատարները ռազմական արկածախնդրության դիմելուց առաջ ուզում են բավարար չափով դրամ, զենք ու հանդերձանք ստանալ Աֆղանստանի նախկին թագավոր Մոհամեդ Զահիր Շահից:

Միջազգային կարեւոր քննարկումներ են անցկացվում նաեւ Իրանի մայրաքաղաք Թեհրանում: Վերջին օրերին այնտեղ այցելեցին եվրոպական մի շարք բարձրաստիճան պատվիրակություններ, նորանոր առաջարկներ անելով Աֆղանստանի ապագային վերաբերող ՄԱԿ-ի ծրագրի առնչությամբ: «Ֆիգարո» թերթը տեղեկացնում է, որ այդ ծրագրով նախատեսվում է Քաբուլում թալիբների վարչակարգի տապալումից հետո մտցնել ՄԱԿ-ի կառավարում, որին կոչանդակեն աֆղանական ժամանակավոր կառավարությունը եւ անվտանգության միջազգային ուժերը: Վերջիններիս բնույթը դեռեւս որոշակի չէ: Ծրագրում զգալի դեր է հատկացվում Իրանին:

ՄԱԿ-ի ծրագրի սցենարը հետեւյալն է: ԱՄՆ-ի ռազմական օժանդակությամբ Հյուսիսային դաշինքի ուժերը մինչեւ ձմեռ գրավում են Քաբուլը: Նախագահ Ռաբանին մի քանի օրվա ընթացքում իշխանությունը հանձնում է ժամանակավոր կառավարությանը, որի 9-12 անդամները ներկայացնում են Աֆղանստանի կուսակցությունները եւ ազգությունները: Կառավարության նախագահները գործում են փոխնիփոխ, մեկական ամսով: Բայց երկրի գերագույն իշխանությունը պատկանում է ՄԱԿ-ին: հանձին «պրոկոնսուլի», «կառավարչի» կամ «փոխարքայի» (պաշտոնի անվանումը դեռ չի կոնկրետացված): Այդ պաշտոնի հավանական թեկնածուն Ալժիրի նախկին արտգործնախարար Լախդար Բրահիմին է: Ենթադրվում է, որ Նյու Յորքում խորհրդակցություններ անցկացնելուց հետո նա շաբաթավերջին կմեկնի տարածաշրջան: 1997 թ. Բրահիմին նշանակվել էր Աֆղանստանում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի անձնական ներկայացուցիչ, բայց անցյալ տարի հրաժարական էր տվել իր աշխատանքին խանգարող քաղաքական արգելքների պատճառով: Այժմ նա վերադառնում է որպես ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ: միաժամանակ մարդասիրական եւ քաղաքական գործունեության լիազորություններով:

Աֆղանստանում ՄԱԿ-ի կառավարումը պետք է տեւի մեկ տարի՝ մինչեւ ցեղապետների, հոգեւոր առաջնորդների եւ մտավորականների ժողովի «լոյա ջերգայի» հրավիրումը: 1964 թ. «լոյա ջերգայի» շնորհիվ էր,թ որ Զահիր Շահը հաստատեց սահմանադրությունը՝ երկիրը դարձնելով սահմանադրական միապետություն: 1973 թ. Մոհամմադ Դաուդ Խանը գահընկեց արեց թագավորին, իսկ 1977 թ. մեկ ուրիշ «լոյա ջերգայում» հռչակեց հանրապետական սահմանադրություն:

ԱՄՆ-ի ու Եվրամիության հավանությունն ստացած ՄԱԿ-ի ծրագիրն ըստ երեւույթին ընդունելի է նաեւ Թեհրանի համար: Այստեղ Իրանը որոշակի դեր ունի. նա պետք է Հյուսիսային դաշինքի ղեկավարներին համոզի ընդունելու ՄԱԿ-ի ծրագիրը: Իրանի արտգործնախարար Քամալ Խարազին հայտարարեց, որ իր երկիրը դեմ չէր լինի, եթե Զահիր Շահը ինչ-որ դեր խաղա Աֆղանստանում, «պայմանով, որ այն չպարտադրվի դրսից»: Միաժամանակ Իրանը դեմ է Աֆղանստանում կազմվելիք կառավարությանը «չափավորական» թալիբների մասնակցությանը:

Եվրոպական աղբյուրներից մեկը մանրամասնում է, որ Աֆղանստանի կառավարման ՄԱԿ-ի ծրագիրը հիշեցնում է Կամբոջայի համանման ծրագիրը, որտեղ ՄԱԿ-ը 1991 թվականից սկսեց ապահովել 1993 թ. ընտրությունների նախապատրաստությունը: Կամբոջայում 15000 խաղաղարարների, 3000 ոստիկանների եւ մի շարք պաշտոնյաների ներկայությունն արժեցավ 3 մլրդ դոլար: Նման գումար հավաքելը շատ երկար կտեւի: Ուստի Աֆղանստանում «կապույտ սաղավարտների» թիվը փոքր կլինի: Դրանց կազմը դեռ անորոշ է: «Իսլամական խաղաղարար ուժերի» կազմումն անհնար է իսլամական պետությունների տարածայնությունների պատճառով: Ուստի առավել հավանական է թվում բրիտանա-ամերիկյան զորաբաժնի կազմավորումը:

Ի դեմ, ՄԱԿ-ի պաշտոնյաները խոստովանում են, որ ԱՄՆ-ին խնդրել են Աֆղանստանում փոքր-ինչ դանդաղ գործել, որպեսզի իրենք հասցնեն կենսագործել ՄԱԿ-ի ծրագիրը:

ՊԵՏՐՈՍ ԲԵՐԻՇՅԱՆ

Աֆղանստանում թալիբները լրտեսների որս են սկսել

Թալիբների վարչակազմը սպառնում է մահապատժի ենթարկել լրտեսներին եւ քայքայիչ գործողություններ իրականացրած անձանց: Ինչպես հայտարարեց թալիբների վարչակարգի ներքգործնախարար Աբու Ռեզաքը, մոլլա Օմարը հրամայել է, որ «թշնամական աշխատանքի մեջ մերկացված ամեն ոք դատից հետո պետք է մահապատժի ենթարկվի»: Ռեզաքն ընդգծեց, որ արդեն ձերբակալված են 100-ից ավելի կասկածյալներ: «Ներկայումս համապատասխան ծառայությունները ստուգում են, թե արդյոք նրանք թշնամիների հետ կապեր ունեցե՞լ են պատերազմական պայմաններում», հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը:

Ռեզաքը հաստատեց այն լուրերը, թե թալիբները զենք են բաժանում բնակչությանը, որպեսզի ժողովուրդը պայքարի «ամերիկացի զավթիչների» դեմ: Հաղորդվում է նաեւ, որ Ղանդահարում ուժեղացվել են անվտանգության միջոցառումները: Քաղաքի գրեթե ամայի փողոցներում պարեկում են նռնականետներով եւ ինքնաձիգներով զինված կարգախմբեր, որոնք կանգնեցնում են բոլոր անցորդներին եւ ստուգում նրանց փաստաթղթերը:

Պ. Ք.

ԱՇԱԲԵԿՉԱԿԱՆ

Բեն Լադենի կապերն Ադրբեջանի հետ

Սամիր Ռագիմով ծածկանունով անկախ մի լրագրող Բաքվից գրում է, որ Ուսամա բեն Լադենի կապերն Ադրբեջանի հետ սկսվել են 90-ականների կեսերից: Ստորեւ ինտերնետային ցանցով ստացված նրա հոդվածի համառոտ թարգմանությունը՝

Ադրբեջանը, որը, ըստ ամերիկյան կոնգրեսի տվյալների, բեն Լադենի «Ալ Ղաիդա» կազմակերպության հետ կապեր ունեցող 34 երկրների ցուցակում է, պատրաստակամություն է հայտնել օժանդակելու Վաշինգտոնին՝ չեզոքացնելու ահաբեկչական խմբավորումները: Նախագահ Հեյդար Ալիեւը հաստատել է իր անվերապահ աջակցությունն այդ հարցում, հայտարարելով, որ նման քայլը բխում է Ադրբեջանի ազգային շահերից, քանի որ այդ խմբերը վերջին տասնամյակում գաղտնի գործել են իր երկրում:



Ճիշտ է, համագործակցության մակարդակի մասին ոչինչ չի հաղորդվում, սակայն փաստ է, որ 1998-ին նախագահ Քլինթոնն անձնական նամակ է հղել նախագահ Ալիեւին՝ շնորհակալություն հայտնելով մի քանի ծայրահեղականների ձերբակալման առթիվ: Ադրբեջանի անվտանգության նախարարության նախկին մի աշխատակից տեղական «էխո» օրաթերթին հայտնել է, որ երկրի ներսում չեզոքացված խմբավորումներից մի քանիսը մտադիր էին Ադրբեջանն օգտագործել որպես տարածաշրջանային բազա: Նրանց գործունեության հետքերը գնում են դեպի Խորհրդային Միության փլուզման օրերը, երբ հանրապետությունները շփոթմունքի մեջ էին: Ծայրահեղական խմբավորումներից մեկը «Իսլամական ջիհադն» է, որը համարվում է «Ալ Ղաիդայի» կարեւորագույն թեւը: 2000 թ. մայիսին Լոնդոնում ձերբակալվեցին «Ջիհադ» ադրբեջանական բջջի երկու անդամներ, որոնցից մեկը, ըստ ամերիկյան պետքարտուղարության տվյալների, Իբրահիմ էյդարուզն էր՝ Բաքվի բջջի ղեկավարը մինչեւ 1997 թ., որը նաեւ կապ ուներ Քենիայում եւ Տանզանիայում ամերիկյան դեսպանատների ռմբակոծումների հետ: Երկրորդ կասկածյալ Ադել Աբդել Բարիի հետ նա գնացել էր Լոնդոն՝ ղեկավարելու «Ջիհադ» բջիջը Լոնդոնում: Այդ խմբավորումը երկար տարիներ սերտ կապերի մեջ էր բեն Լադենի կազմակերպության հետ: Այդ կապն ամրապնդվել էր «Ջիհադ» առաջնորդ Այման Ալ Զավահրի անդամակցությամբ «Ալ Ղաիդայի» մեջլիս էլ շուրա կոչվող հյուպատոսական խորհրդին: Ըստ Լոնդոնում հրատարակվող «Ալ Հայաթ» արաբական օրաթերթի, բեն Լադենը դրամական փոխհատուցմամբ նրան ազատել էր Դաղստանի բանտերից մեկից, որտեղ նա կալանավորված է եղել 1996-ին անօրեն երկիր մուտք գործելու համար: Մոտավորապես այդ ժամանակ էլ, երեւի, սաուդյան այդ այլախոհը Բաքվում գործող «Ջիհադի» կառույցը փորձել է օգտագործել որպես բազա: Երկու տարի անց՝ 1998-ի փետրվարին բեն Լադենն ու Ալ Զավահրին ստորագրել են «Ֆաթուա»՝ ԱՄՆ-ի եւ Իսրայելի դեմ ջիհադ վարելու միջազգային մահմեդական ճակատ, որը կոչ էր անում հարձակվել այդ երկու երկրների շահերի եւ համաքաղաքացիների վրա: ԿՀՎ-ի ձեռքն անցած՝ բեն Լադենի հեռախոսային խոսակցությունների ցուցակից պարզ է դարձել, որ 1996-98 թթ. նա 60 անգամ զանգահարել է Սաուդյան Արաբիա, Պակիստան եւ Բաքու: Առավել կոնկրետ փաստերը կապված են 1998-ի ամերիկյան դեսպանատների ռմբակոծումների հետ: Քենիական «Նեյշն» օրաթերթը պարզել է, որ ահաբեկիչներից մեկը՝ Մոհամեդ Ռաշիդ Դաուդ էլ Օուհալին, որը ողջ էր մնացել Նայրոբիի դեպքերից հետո, մի քանի հեռախոսային զանգ էր ստացել Բաքվից նախքան հարձակումը: Ավելին, ըստ ամերիկյան հետախուզական տվյալների, հարձակումից մեկ ժամ առաջ Լոնդոնում Բաքվից արաբերեն հեռագիր է ստացվել, որ ահաբեկչական գործողությունը տեղի է ունենալու: Մինչեւ 1999 թ. արդեն ծանրակշիռ ապացույցներ կային, որ Ադրբեջանն օգտագործվում է որպես «Ալ Ղաիդայի» բազա: «Իսլամական ջիհադ» երեք անդամներ՝ Իհաբ Սաֆերը, Էսամ էլ դին Հաֆեզը եւ Սալամա Մաբրուքը, որը «Ալ Զավահրիի» աջ ձեռքն էր, հանձնվեցին եգիպտոսին: Իսկ այս տարվա սկզբներին «Հիզբուլ-Թահրիր» կազմակերպության բջջի հայտնաբերումը հաստատում է այն կասկածները, որ մահմեդական արմատական խմբավորումները դեռեւս ակտիվ են Բաքվում: Չնայած այս խմբավորումը պաշտոնապես դեմ է ահաբեկչությանը, սակայն նրա պանիսլամական գլոբալ կառավարություն կազմելու ծրագիրը սոսկ բավական է մտահոգություն առաջացնելու:

Ուկրաինան դարաբաղյան հակամարտության «արագ եւ դյուրին կարգավորման պատրանքներ չունի»

ԵՐԵՎԱՆ, 25 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հարավային Կովկասի երկրներ կատարած չորրորդ շրջագայությունից հետո Կիեւ վերադարձած Ուկրաինայի արտգործնախարար Անատոլի Զլենկոն, պատասխանելով ուկրաինացի լրագրողների հարցերին, ձեւակերպել է հարավկովկասյան տարածաշրջանում Ուկրաինայի քաղաքականության գլխավոր սկզբունքը: Ըստ նրա, Կովկասը եւ այնտեղ ապրող ժողովուրդները չափազանց զգայուն եւ ուշադիր վերաբերմունք են պահանջում: «Ուժի քաղաքականությունն այստեղ անընդունելի է, ընդգծել է Զլենկոն: Քաղաքականության ուժը՝ ահա այն ձեւակերպումը, որից բխում է Ուկրաինայի դիրքորոշումը Կովկասի կայունացման հարցերում»:

Հայաստանում Ուկրաինայի դեսպանատնից ստացված տեղեկատվության համաձայն, արտգործնախարարը հայտարարել է, որ Ուկրաինան Լեռնային Ղարաբաղի խնդիրների եւ վրաց-աբխազական հակամարտության արագ եւ դյուրին կարգավորման պատրանքներ չունի: «Ուկրաինան կողջունի ամենից առաջ այն որոշումները, որոնք փոխընդունելի եւ փոխշահավետ կլինեն հակամարտող բոլոր կողմերի համար, ուստի մենք հանդես ենք գալիս բոլոր վիճահարույց հարցերը միջազգային իրավունքի հիման վրա բացառապես խաղաղ, քաղաքական եղանակներով լուծելու օգտին», ընդգծել է նախարարը:

ՄՇԱԿՈՒՅԹ

Մեծ երախտավորը

Լիդիա Ալեքսանդրովնա Դուռնովո

Մաշտոցի անվան Մատենադարանի ընթերցասրահներում փակցված են հայագիտության մեջ մեծ ավանդ ունեցող գիտնականների նկարները: Ակադեմիկոսներ Հակոբ Մանանդյանի, Հրաչյա Աճառյանի, Մանուկ Աբեղյանի, Լեւոն Խաչիկյանի եւ այլոց դասկերների հարեւանությամբ փակցված է նաեւ ռուս նշանավոր արվեստաբան Լիդիա Ալեքսանդրովնա Դուռնովոյի մեծադիր նկարը: Այդ դասվին նա արժանացել է միջնադարյան հայ գեղարվեստի ուսումնասիրման ասպարեզում ունեցած ակնառու վաստակի համար: Նրա հրատարակած գիտական հետազոտությունները նոր խոսք էին այդ ասպարեզում:

Խորաթես ուսումնասիրելով հայկական մանրանկարչությունը, հատկապես նրա կիլիկյան դպրոցը, Լիդիա Ալեքսանդրովնան աշխարհին դասմեց այդ հրաշալի գործերի, նրանց ստեղծող մեծ վարպետների մասին: Բազմաթիվ լեզուներով նրա հրապարակած ուսումնասիրությունների շնորհիվ մեծացավ ուշադրությունը հայ արվեստի ու նաեւ հայ ժողովրդի նկատմամբ: Մեծ հեղինակություն վայելող, շատ հարգված ու ճանաչված ռուս գիտնականների գնահատականներն անկողմնակալ էին եւ խիստ տպավորիչ: Իրենց ստեղծագործություններով միջնադարյան հայ նկարիչները հասել էին կատարելության, եւ Լիդիա Դուռնովոն դա արժեւորեց լավագույն ձեւով: Ահա թե նա ինչ գնահատական է տալիս մանրանկարչությանը. «Հայկական ձեռագրական գեղանկարչությունն իր բացառիկ ինքնատիպությամբ եւ ստեղծագործական ներշնչվածությամբ, կոմպոզիցիոն եւ զարդանկարչական հորինվածքների գեղեցկությամբ ու ներդաշնակությամբ, ինչպես նաեւ կատարման փայլուն վարպետությամբ իր ուրույն տեղն ունի գեղարվեստի համաշխարհային գանձարանում»:

1936 թ. ակադեմիկոս Հովսեփ Օրբելու խորհրդով եւ Երեւանի դասկերասրահի տնօրեն Ռուբեն Դամբյանի հրավերով Լ. Ա. Դուռնովոն գալիս է Երեւան: Հայաստանում նրա համար բացվեց գործունեության ընդարձակ ասպարեզ: Նա ձեռնամուխ եղավ եկեղեցիների որմնանկարների ուսումնասիրության եւ դասծենահանման գործին: Իր աշակերտների օգնությամբ նա ընդօրինակել է Տաթեւի, Հաղբատի, Թալինի, Արուճի, Լմբատի եւ այլ եկեղեցիների որմնանկարները:

Նրա ամենակարեւոր ծառայություններից մեկը եղավ Էջմիածնի Մայր տաճարի որմնանկարների վերանորոգումը: Դեռեւս 18-րդ դարի վերջերին մեծ նկարիչ Հովնաթան Հովնաթանյանը Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի հանձնարարությամբ նկարազարդել է Մայր տաճարի ներսի դասերը: Այդ մասին վանքի գրքերի տակ թողնվել է ընդարձակ վիմագիր արձանագրություն: Բայց հետագայում այդ որմնանկարների վրա սվաղ էին արել: Բացի այդ առկա էր նաեւ բնական մաշվածությունը, փոշոտվելու եւ մրոտվելու մշտական գործոնը: Հովնաթանյանի նկարները համարյա չէին երեւում: Դուռնովոն հանձնարարություն ստացավ նորոգել կամ նորից ստեղծել այդ որմնանկարները՝ հարազատ մնալով Հովնաթանյանի եւ, ընդհանրապես, հայ որմնանկարչության սկզբունքներին: Նախապես կազմելով նախագծերը, իր աշակերտների մասնակցությամբ Լ. Դուռնովոն կարողացավ վերականգնել վանքի որմնանկարները: Նա ձգտում էր դրանք կատարել ավելի դայծառ, ավելի փայլուն գույներով: Երբ նրան հարցրել էին դասճառը, նա դասասխանել էր, թե հաշվի է առնում այն հանգամանքը, որ այդ եկեղեցում վառվելու են տասնյակ հազարավոր մոմեր, որոնց դասճառով այդ դայծառությունը, միեւնույնն է, խամրելու էր:

Այդպես էլ եղավ: Բայց ինչ որ կա այժմ հրաշալի է, տպավորիչ, խորհրդավոր: Այդ գործում Լ. Ի. Դուռնովոն ներդրեց տարիների իր մեծ փորձը եւ տաղանդը: Նա առաջնորդվում էր հայ արվեստի ոգով, նրա մանրանկարների մոտիվներով ու գույներով:

Լ. Ա. Դուռնովոն մեծ գործ է կատարել հայ միջնադարյան գեղանկարչության, քանդակագործության, դաջարվեստի եւ հատկապես մանրանկարչության ուսումնասիրման ուղղությամբ: Նրա աշխատությունները 1952 թ. հրատարակված «Հին հայկական մանրանկարչությունը», 1957-ին լույս ընծայված «Հին հայկական գեղանկարչության համառոտ դասմությունը», հետմահու տպված «Հայկական նկարչությունը» եւ մյուսները մնայուն գործեր են եւ մեծաթես նպաստել են հայ կերդարվեստի ճանաչմանն ու գնահատանքին: Նրա աշակերտները շարունակեցին նրա աշխատանքը՝ հարստացնելով հայ արվեստի ուսումնասիրման բնագավառը նորանոր հետազոտություններով:

Ցավով դետք է ասել, որ կիլիկյան մանրանկարչական դպրոցի մեծատաղանդ ներկայացուցիչ Թորոս Ռոսլինի մասին նրա գրած մենագրության ձեռագիրը, որն արդեն ավարտված էր 1962 թ., այդպես էլ մահից հետո չհայտնաբերվեց նրա արխիվում: Միանգամայն իրավացի է Թորոս Ռոսլինի ստեղծագործական ժառանգության ուսումնասիրող Իրիան Դրամբյանը, որ գրում է, թե «դա մեծ ու անփոխարինելի կորուստ է հայ արվեստագիտության համար»:

Լ. Ա. Դուռնովոն մահացել է 1963 թ. հունվարի 7-ին եւ իր կտակի համաձայն թաղվել է Երեւանում:

ՎԱՐԴԱՆ ԳԲԻԳՈՐՅԱՆ

Խմբագրության կողմից

Վերջերս հայտնի դարձավ, որ Լ. Ա. Դուռնովոյի գերեզմանը սրբադրվել է: Գերեզմանատան վարչության գիտությամբ շիրմաքումբը հավասարեցվել է, հուշարձանը դեն է նետվել, եւ գերեզմանի հարեւանությամբ նոր թաղում է կատարվել: Մատենադարանի անվան Մատենադարանի ղեկավարությունն այդ կապակցությամբ դիմեց Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարար Հայկ Հարությունյանին: Նախարարի վճռական միջամտությունից հետո շիրմը կարգի բերվեց, եւ հուշարձանը դրվեց իր տեղում: Այս կապակցությամբ Մատենադարանի տնօրեն Սեն Արեւշատյանը եւ փոխտնօրեն Վարդան Գրիգորյանը նախարարին ուղղած շնորհակալական նամակում նշում են, որ այդ գործում եռանդուն մասնակցություն ունեցավ Երեւանի ներքին գործերի վարչության պետի տեղակալ, գնդապետ Սաշա Սաֆարյանը: «Ուրախ ենք,- գրված է նամակում,- որ ներքին գործերի համակարգում աշխատում են Ս. Սաֆարյանի նման սկզբունքային, ազնիվ եւ գործունյա սպաներ»:

Բարերարներ Գյումրիում

Գյումրու Վահան Թեքեյանի անվան թիվ 2 դպրոցում մի քանի օր առաջ տոնական տրամադրություն էր. բարերարներ էին եկել դպրոց: Այս ծանր ժամանակներում հատկապես դպրոցներին օգնություն ցուցաբերելն իսկապես շնորհակալ գործ է: Ու ահա Ռամկավար Ազատական կուսակցության Բոստոնի վարչության եւ Թեքեյան մշակութային միության ներկայացուցիչ Սպես Թորոսյանն ու Թեքեյան մշակութային միության Նյու Յորքի ակումբի ներկայացուցիչ Հրանտ Ղուլյանն աշակերտների համար անհրաժեշտ պիտույքներ էին նվեր բերել: Ամենը, ինչ որ գնվել էր ծեռք էր բերվել բարերարների միջոցով: Տոնական այս տրամադրությունը համակել էր նաեւ Շիրակի մարզպետարանի ներկայացուցիչ Նորայր Գրիգորյանին, որը դպրոցի մանկավարժների ու աշակերտների անունից շնորհակալություն հայտնեց բարերարներին: 75-ից ավելի աշակերտներ, որոնք աղքատ եւ սովորում են տնտեսական ծանր պայմաններում, որոնց համար ամեն մի օգնություն այսօր իսկապես շատ կարեւոր է, շնորհակալություն հայտնեցին Սպես Թորոսյանին եւ Հրանտ Ղուլյանին: Սփյուռքահայ մեր բարեկամները հեռացան Գյումրիից ոգեւորված եւ նոր ծրագրերով:

Ս. Գ.

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

Ճշմարիտ ու անսեթեւեթ խոստովանություն

Կարո Մելիքսեթյանի «Հարյուր ու մեկ տաղ» ժողովածուն

Հասարակական, քաղաքական անգամ ամենածայրահեղ անցուդարձերը, կենցաղային հեղաշրջումները, առօրեական աշխարհն անգոր են բանաստեղծելու դեմն առնելու: Ի վերուստ տրված շնորհն անգամ կգտնի երեւալու իր ճանապարհը: Գոնե այսպես է Կարո Մելիքսեթյանի դարագայում, որի նոր գիրքն է լույս տեսել՝ «Հարյուր եւ մեկ տաղը»: Այսինքն՝ տաղարան:

«Նաղաշի, Սայաթ-Նովայի եւ Չարենցի սմանչելի տաղերից հետո, ես կարծում եմ, շատ քիչ հեղինակներ

կհամարձակվեն մտնել այդ «կամակոր» ժանրի ծանրության տակ, որովհետեւ լավ տաղը, առանց չափազանցության, հրաշք կայանալու դեպ մի բան է», գրում է գրքի խմբագիր Պատվական Շահարյանը «Հարյուր ու մեկ տաղ»-ի առաջաբանում:

Այո, մեծ համարձակության է դիմել Կարո Մելիքսեթյանը, եւ այդ համարձակությունը արդարացվել է: Ժամանակի մեր այս հոլովույթում, երբ խառնված են իրար իշխան ու ռամիկ, երբ վերջին տասը տարիներին հատկապես անասելի հիացումներ ու հիասթափություններ ունեցանք, երբ «ձեւախեղված մանկուրտների մի խումբ տրոյական ձիու տարբերակով եւ աճպարարությամբ գրպանեց մեր հերոսական ու աստվածատեր ժողովրդի իշխանությունը եւ շնածկների դեպ հոշոտեց երկիրն այնպես, որ նույնիսկ ամենայն ծիգերի շնորհիվ խելքի չի գալիս» (Պատվական Շահարյան), Կարո Մելիքսեթյան բանաստեղծը անանց արժեքներին է տեր կանգնում, քանզի լավ գիտե, որ ողբասաց տաղերգուն անչափ տխուր բան է անվերջ հավատավոր ճշմարիտ բանաստեղծի համեմատությամբ:

Այսպես է Կարո Մելիքսեթյանի դատկերած Ավետիք Իսահակյանը, ով «...ժամանակը չափում էր ոչ թե /Իր երկարությամբ, այլ՝ միայն խորքով», ով «Որպես անվախճան ճամփորդ ու ճամփա/ Ու հոգեւոր հաց ու կանաչ ածու» եկավ իր Հայրենիքը հավերժացնելու: Այսպես է դատկերված Ադանայի ծնունդ մի հայ մարդ, ով «զարմանքով նայում է վեր, /Որպես լույսը լույսին նայող՝ երկինքներից խոր ու անհաս» եւ ով մոտեցնում է Աղանան մեզ ամեն օր: Այսպես, այս սիրով ու ջերմությամբ են դատկերված ոչ միայն անձինք, այլեւ տարածքներ, ովքեր վաղուց արդեն կորցրել են իրենց նախնական նշանակությունը եւ խորհրդանիշներ դարձել՝ Շիլաչի, Հաղբատ, Վան, Չանախչի, Թիֆլիս, Լոռի, Գանձասար...

Մեր փրկությունը մեր սիրտ մեջ է, սիրտ խոստովանությամբ է: Սա լավ գիտե Կարո Մելիքսեթյանը: Մենք միայն ու միայն միմյանց սիրելով, իրարով հպարտանալով կարող ենք հարատեւել: Հայտնագործություն չի արել բանաստեղծը, դարգաթես եւս մեկ անգամ մեր ականջին ջանջացել է անբեկանելի այս ճշմարտությունը: «Իմ չունեցածը՝ վերցնում եմ քեզնից,/ Քո չունեցածը՝ մատուցում եմ քեզ, /Ու մեզնից անկախ, միմյանց նկատմամբ, /Մեր հիացմունքն ենք դահդանում այսպես», ասում է Կարո Մելիքսեթյանը, որովհետեւ նա համոզված է, միայն այսպես կարող է դղնձից դոկվել ներդաշնակության հրաշք մեղեդին:

Ինչպես ամեն ճշմարիտ բանաստեղծ՝ Կարո Մելիքսեթյանը հենց տիեզերական ներդաշնակության է կոչում, այլապես ցավի ծաղիկներ կաճեն մեր մեջ, չարությունը կուտի մեր հոգիները:

Ի՞նչ ենք ուզում մենք առանձին-առանձին. մեզ հասանելիք երջանկությունը, մեր կանաչ դարդասներն ենք ցանկանում տեսնել: Ու նաեւ միասնական՝ ողջ հայությամբ կարող ենք հասնել երջանկությանը: Բավական է, բավ է էլվենք, «ծողված ադրենք հին հավատի ու նոր հավատքի մեջ»:

Աստծուց բանաստեղծը խորհուրդ է հայցում, խորհուրդ, քանզի մենք ընկել ենք մեծերի (շատախանակների), ուժեղների (շատախանակների) մեջ ու ջարդվում ենք: Այս վերջիններն առանց Աստծո եւ առանց Աստծո օգնության էլ ադրում են, կան, իրենց երկնաթերթն ու իրենց բանկերը, իրենց բանակները եւ իրենց մտերն են ստեղծում: Մենք նշխար ենք ուզում: Համոզված է Կարո Մելիքսեթյանը. նշխարով կադրենք, որովհետեւ մեր մեջ երբեք չի մեռնում Հավատը եւ Սերը:

Կարո Մելիքսեթյանի նոր՝ «Հարյուր եւ մեկ տաղ» բանաստեղծական ժողովածուն եւս մեկ անգամ հաստատում է վերն ասվածը: Նշանակում է ճշմարիտ ու անսեթեւեթ մի նոր խոստովանագիրք է մեր սեղանին:

ՍԵՐԳԵՅ ՍԱԼՈՅԱՆ

Վրաց բանաստեղծի հիշատակին

Երեկ, «Հայաստան-Վրաստան ընկերության» նախաձեռնությամբ, նշվեց ժամանակակից վրաց բանաստեղծ Ջանսուղ Չարկվիանու ծննդյան 70-ամյակը: Գրական ցերեկույթը բացեց ընկերության նախագահ, հասարակական գործիչ Հերբերտ Մելիքսեթյանը: Վրաց գրողի ստեղծագործությունները հանգամանորեն ներկայացրեց նրա գործերի հայերեն թարգմանիչ, բանաստեղծ, հրատարակիչ Արտակ Ոսկանյանը: Նա հատկապես կանգ առավ գրական այն գործերի վրա, որոնցում արտացոլված են գրողի մարդասիրությունն ու եղբայրասիրությունը: Հիշողություններով հանդես եկան վրաց գրողի հայ ընկերներ, գրչակիցներ Հրաչիկ Բայրամյանը, Հարություն Հովնաթանը, Կարո Մելիքսեթյանը եւ ուրիշներ:

Ասմունքի վարպետները հայերեն եւ վրացերեն հնչեցրին Ջանսուղ Չարկվիանու բանաստեղծություններից: Հնչեցին նաեւ հայերեն ու վրացերեն երգեր:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՆԱԹԱՆ

ԹԱՂՐԱՆԿԱՐՉԻ ԱՉՔԵՐՈՎ



Ռուսական տոգեբաղնիք «Անդերլեխտի» համար

5-րդ տուրի հանդիպումներն անցկացրին նաեւ «A», «B», «C» եւ «D» խմբերում ընդգրկված թիմերը: Հայտնի դարձան չեմպիոնների լիգայի խմբային երկրորդ մրցաշարի եւս երկու մասնակիցներ «Ռոման» եւ «Պանաթինաիկոսը»: Ավարտական տուրից առաջ երկրորդ փուլի ուղեգիրն ապահովել են արդեն 9 ակումբներ:

Կայացած հանդիպումներից ամենաուշագրավը Բրյուսելում «Անդերլեխտի» եւ «Լոկոմոտիվի» հանդիպումն էր: 2 թիմերի համար էլ խաղի ելքը հսկայական նշանակություն ուներ 3-րդ տեղի համար մղվող պայքարում: Խաղասկիզբը ոչ մի լավ բան չէր խոստանում հյուրերին, որոնք արդեն 2-րդ րոպեին սեփական դարպասը գոլ բաց թողեցին: Բելգիացիները կարող էին եւս մի քանի անգամ գրավել մրցակցի դարպասը, սակայն չկարողացան իրացնել նպաստավոր պահերը: Իսկ ահա, «Լոկոմոտիվը» լիովին կարողացավ օգտվել դաշտի տերերի պաշտպանների թույլ տված բազում սխալներից եւ խոշոր հաշվով հաղթանակ տոնեց: Դա, անկասկած, «Լոկոմոտիվի» լավագույն խաղն էր չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարում: Առաջին միավորը կորցրեց «Ռեալը» ոչ-ոքի խաղալով «Ռոմայի» հետ: Դա վերջինիս հնարավորություն տվեց մտնելու հաջորդ փուլ: Ուղեգրերի համար պայքարում հատկապես լարված իրավիճակ է ստեղծվել «B» եւ «D» խմբերում, որտեղ միայն ավարտական տուրը կտա բոլոր հարցերի պատասխանները:

Խաղերի արձանագրություններից

«A» խումբ

«Ռեալ»-«Ռոմա» 1-1 (0-1)
0-1 Տոտտի (36), 1-1 «Ֆիգու (75 11 մ)
«Անդերլեխտ»-«Լոկոմոտիվ» 1-5 (1-2)
1-0 Իլիչ (2), 1-1 Իզմայլով (13), 1-2 Սենոկով (28), 1-3 Պիմենով (58), 1-4, 1-5 Բուգնիկին (63,69)

«B» խումբ

«Բոավիստա»-«Լիվերպուլ» 1-1 (0-1)
0-1 Մերֆի (17), 1-1 Պերեյրա (60)
«Բորուսիա»-«Դինամո» 1-0 (1-0)
Ռոսիցկի (34)

«C» խումբ

«Պանաթինաիկոս»-«Շալկե-04» 2-0 (1-0)
Օլիսադեբե (31), Կոնստանտինու (60)
«Արսենալ»-«Մալյորկա» 3-1 (0-0)
1-0 Պիրես (61), 2-0 Բերգկամպ (63), 2-1 Նովո (74), 3-1 Անրի (90)

«D» խումբ

«Լացիո»-«Գալաթասարայ» 1-0 (0-0)
Ստանկովիչ (71)
«Էյնդհովեն»-«Նանտ» 0-0

«A» խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Ռեալ	5	4	1	0	13-3	13
2. Ռոմա	5	2	2	1	5-4	8
3. Լոկոմոտիվ	5	0	1	3	7-9	4
4. Անդերլեխտ	5	0	2	3	3-12	2

«B» խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Լիվերպուլ	5	2	3	0	5-3	9
2. Բոավիստա	5	2	2	1	8-6	8
3. Բորուսիա	5	2	2	1	6-5	8
4. Դինամո	5	0	1	4	4-9	1

«C» խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Պանաթին.	5	4	0	1	8-2	12
2. Արսենալ	5	3	0	2	8-6	9
3. Մալյորկա	5	2	0	3	3-9	6
4. Շալկե-04	5	1	0	4	6-8	3

«D» խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Նանտ	5	2	2	1	7-3	8
2. Էյնդհովեն	5	2	1	2	6-7	7
3. Գալաթաս.	5	2	1	2	3-4	7
4. Լացիո	5	2	0	3	4-6	6

ՇԱԽՄԱՏ

Լեդիներն ընդդեմ սինյորների

Ամստերդամում մեկնարկել է շախմատի յուրօրինակ մի մրցաշար, որտեղ շախմատային լեդիները մրցում են վետերան շախմատիստների՝ սինյորների հետ: Շեւենգենյան մրցակարգով կանցկացվի 10 տուր: «Լեդիների» թիմում ընդգրկված են աշխարհի ներկայիս չեմպիոնուհի Սե Ցզյունը (Չինաստան), Ալիսա Գալյամովան (Ռուսաստան), Չժու Չենը (Չինաստան), Նանա Իոսելիանին (Վրաստան) եւ Սոֆյա Պոլգարը (Իսրայել): «Սինյորների» պատիվը պաշտպանում են Վիկտոր Կորչնոյը (Շվեյցարիա), Լայոշ Պորտիշը (Հունգարիա), Վլադիմիր Հորսը (Գերմանիա), Վասիլի Սմիսլովն ու Մարկ Տայմանովը (երկուսն էլ՝ Ռուսաստան):

Առաջին տուրում ուժերը հավասար էին. գրանցվեց ոչ-ոքի արդյունք՝ 2,5-2,5: Ցզյուն հաղթեց Տայմանովին, իսկ Պոլգարը զիջեց Կորչնոյին: Գալյամովա-Սմիսլով, Չժու-Հորս, Իոսելիանի-Պորտիշ պարտիաներում գրանցվեց ոչ-ոքի արդյունք:

2-րդ տուրում սինյորներն առավելության հասան 3-2 հաշվով՝ շնորհիվ Պոլգարի նկատմամբ Տայմանովի տարած հաղթանակի: Սմիսլով-Ցզյու, Հորս-Գալյամովա, Պորտիշ-Չժու, Կորչնոյ-Իոսելիանի պարտիաներում մրցակիցները խաղաղ դաշն կնքեցին:

ԹԵՆԻՍ

Կաֆելնիկովի 60-րդ հաղթանակը

Սանկտ Պետերբուրգում ընթացող թենիսի միջազգային մրցաշարում Եվգենի Կաֆելնիկովն այս մրցաշրջանում իր 60-րդ հաղթանակը տոնեց՝ 7-6, 6-2 հաշվով պարտության մատնելով Սարգիս Սարգսյանին: Վերջինս հիմնական մրցաշար էր մտել որակավորման փուլից, որտեղ առավելության էր հասել գերմանացի Կոմանդորի նկատմամբ (6-1, 6-0): Նշենք, որ Կաֆելնիկովը 1995 թ. դարձել էր Սանկտ Պետերբուրգի մրցաշարի հաղթող:

Մրցումների 3-րդ օրը գրանցվեց ամենամեծ անակնկալը: Մրցաշարի 7-ամյա պատմության մեջ առաջին անգամ վիճակահանությամբ թիվ 1 համարը ստացած թենիսիստը մեկնարկում դուրս մնաց հետագա պայքարից: Դա իսպանացի խուան Կարլոս Ֆերերոն է, որը դասակարգման ցուցակում ընթանում է 5-րդ հորիզոնականում: Ֆերերոն պարտվեց գերմանացի Ռայներ Շուլերից (6-7, 4-6):

Մրցաշարի անցյալ տարվա հաղթող Մարատ Սաֆինը 6-4, 6-2 հաշվով պարտության մատնեց Դեյվիդ Պրինոշիլին: Պայքարը շարունակում են նաեւ Սանտորոն, Իվանիսեւիչը, Միրնին:

10 մլն դոլար առաջնեկի համար

Ամերիկացի Ջոն Կորֆը, որը Նյու Ջերսի նահանգում ամեն տարի թենիսի խոշոր մրցաշար է կազմակերպում, Շտեֆի Գրաֆին եւ Անդրե Աղասուն 10 մլն դոլար է խոստացել, եթե նրանք երաշխավորեն, որ դեկտեմբերին լույս աշխարհ եկող արու զավակը կմասնակցի 2017 թ. մրցաշարին:

Ջոն Կորֆը մտերիմ հարաբերությունների մեջ է Գրաֆի հետ: Հենց Նյու Ջերսիի մրցաշարում, 1999 թ. Շտեֆին հայտարարեց մեծ թենիսին հրաժեշտ տալու իր որոշման մասին:

Աղասին ու Գրաֆն ամուսնացան երկուշաբթի օրը: Լաս Վեգասում տեղի ունեցած հարսանյաց հանդիսությանը ներկա էին միայն հարազատներն ու մտերիմները:



Ուղղահայաց

1. Գոհիկ մարդկանց բազմություն: 2. Կանացի ամենացածր ձայն: 3. Լեռնագագաթ Հայկական լեռնաշխարհում: 5. Դրամական միավոր: 6. Առավոտյան երկրի մակերեսին նկատվող ջրի մանր կաթիլներ: 7. Հունական առասպելական հերոս: 9. Արմենակ անվան կրճատ ձեւը: 10. Գեղարվեստական գրականություն, երաժշտություն, նկարչություն, հանդակ ընդհանուր անվանումը: 11. Անցած դարի սկզբին բոլշեւիզմին թշնամի հոսանքին հարող: 12. Մեկնակ, ...: 13. Քիմիական տարրի միացությունը թթվածնի հետ: 14. Ամրոց, որտեղ փակվել էր Փառանձեմ թագուհին: 15. Եկեղեցական հանդիսավոր արարողություն: 18. Հարթ, ...: 19. ... Վեգներ: 24. Ֆրանսիացի կոմպոզիտոր Ժ. Լյուլիի օպերաներից: 25. Լուսատու հարմանմ: 26. Մեկին պատշող, սիրող մարդ: 27. Հանդիսավոր, ներբողական ժանրի երաժշտական մեծ ստեղծագործություն: 28. Մախաթը տրա մեջ չի կարող մնալ: 31. Սորուն եւ հեղուկ մարմինների չափ մի շարք երկրներում: 34. Տղամարդու անուն: 36. Արվեստի գործ: 38. Բարձրահարկերում օգտագործվող էլեկտրական սարք: 39. Երաժշտական մեծ ստեղծագործություն նվագախմբի համար: 40. Առարկաներն իրարից բաժանող պատվար: 42. Աշխատանքով ստեղծված ունեցվածք, արդյունք: 44. Կոզի Կարիբյան ծովում: 49. Այս պտուղը մեծ քանակության C վիտամին է պարունակում: 50. Ծովափնյա բնակավայր Ռումինիայում: 51. Ուտելիք, սնունդ, պարեն. ընդհանուր անվանումը: 52. Բուլղարացի կին պայծառատես: 56. Քաղաք Ռուսաստանում, Կրասնոյարսկի երկրամասում: 58. Անշարժ գույք, որը դրվում է վերցրած գումարի դիմաց: 59. Երաժշտական ախտորժելի եղանակ: 62. Թարթիչ, ...: 63. Չինատեսակ: 66. Հարդուրանք, դյութանք, ...: 68. Հանգստավայր Մերձբալթիկայում: 69. Պատմական մարզ Հունաստանի հյուսիսում: 70. Իր, որի համար «Մեր մանկության տանգոն» կինոնկարում հերոսին դատապարտեցին: 71. Տղամարդու անուն, ավելացնենք ովսկի մասնիկը, կղառնա աշխարհահռչակ հայ նկարչի ազգանունը: 72. Մասնագիտություն: 75. Խաղողից եփված դոշաբ: 76. Ֆրանսահայ գծանկարիչ: 80. Բնակավայր: 81. Լիճ Արեւմտյան Հայաստանում: 82. Ակսել Բակունցի հերոսներից: 83. «Լիր ...»: 86. Հողի մակերեսի չափի միավոր:

Հորիզոնական

1. Մտածմունք, խոհ, մտորում: 4. Հակաբիոտիկ դեղամիջոց: 8. Գետ Հնդկաստանում: 16. «Դեկամերոնի» հերոսներն ու հերոսուհիներն այս հիվանդությունից խուսափելու համար էին հավաքվել քաղաքամերձ վայրում: 17. Մ. Խորենացուն տրված տիտղոսը: 20. Հեռու տեղից եկած նվեր: 21. Մաշկային հիվանդություն: 22. Չկնատեսակ: 23. Համաշխարհային մասշտաբի թիվ առաջին ահաբեկչի անունը: 25. Դեյլան, ...: 27. Մեզոզոյան դարաշրջանի երրորդ ժամանակաշրջանը: 29. Ընդավորների ընտանիքի խոտաբույս, անասնակեր: 30. Երկրաշարժից կործանված գյուղ Արարատի փեշերին: 32. Պետության ղեկավար, միապետ: 33. Սատուրն մոլորակի ամենամեծ արբանյակը: 35. Գետ Գերմանիայում: 37. Քաղաք Էստոնիայում: 41. Գետ Ռուսաստանում, Արխանգելսկի մարզում: 43. Մոմե ճանդակների աշխարհահռչակ թանգարանի տիրուհին: 45. Քաղաք Իտալիայում: 46. Ակվարիումային ձուկ: 47. Փոխաբերություն, ...: 48. Հովիվ, ...: 53. Ալեհավաք բառն այլ լեզվով: 54. Այս կարգին պատկանող կենդանի է կաքիկը: 55. Քաղաք Ճապոնիայում: 57. Աշխարհի ամենաբարձր ջրվեժը: 59. «Դոն Քիշոտ» օպերայի ֆրանսիացի հեղինակը: 60. Լողաձեւ: 61. Մայրաքաղաք Եվրոպայում: 64. Ըստ հունական դիցաբանության, այս դիցուհին օգնեց Մենելավոսին լաբիրինթոսից դուրս գալու: 65. Ավետարանիչ: 67. Մարմի աշխատությունը: 73. Քաղաք Անդրկովկասում: 74. Այս նշանավոր գրողի ազգանունով է անվանվում Երեւանի պուրակներից մեկը: 77. Լիճ Ֆինլանդիայում: 78. Զրահաշտ, ...: 79. Հայկական լրատվական գործակալություն «Նոյան ...». 84. ... վան Բեթհովեն: 85. Ժողովրդական ավանդական գույց: 87. Այս հայ զորավարն իր զորքով մասնակցել է Տրոյական պատերազմին: 88. Եկեղեցականին շնորհվող առանձին պատվի նշան: 89. Ֆ. Ֆելլինիի ֆիլմերից (Իտալիա, 1969 թ.). 90. Ձիրք, բնական մեծ ընդունակություն, շնորհք, ...:

Նախորդ սկանդինավյան խաչբառի պատասխանները

Ուղղահայաց 1. Տիալ: 2. Սմոն: 3. Բրեսան: 4. Անահիտ: 5. «Կակ»: 6. Արաբ: 7. Առան: 8. Սերենադ: 9. Լադ: 10. Միս: 11. «Ջոկոնդա»: 12. Տարզան: 13. Դալ: 14. «Նանա»: 15. Գինի: 16. Կզակ: 17. Տիար: 18. Նիլ: 19. Ավի:

Հորիզոնական 1. Նար: 2. «Սալոմե»: 3. Փարաջա: 4. Մելանին: 5. Հակոբ: 6. Սախարին: 7. Իդեն: 8. Կոտ: 9. Անանի: 10. Իզա: 11. Ազնի: 12. Ալանին: 13. Ավո: 14. Ադա: 15. Դալի: 16. Անի: 17. Իկար:

Օրվա հետքերով

Ադրկովկասյան երկրները փորձում են հակաահաբեկչական պայքարի մեկ դիրքորոշում մշակել

Թբիլիսիում հանդիպել են երեք երկրների խորհրդարանների նախագահները

Ֆրանսիայի Սենատի նախագահ Քրիստիան Պոնսլեի միջնորդությամբ Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում հոկտեմբերի 22-24-ը տեղի է ունեցել անդրկովկասյան երեք երկրների խորհրդարանների նախագահների հերթական հանդիպումը:

Հայաստանի Ազգային ժողովի, Ադրբեջանի Միլլի մեջլիսի եւ Վրաստանի պառլամենտի նախագահներ Արմեն Խաչատրյանի, Սուրբուզ Ալեսբերովի եւ Զուրաբ Ժվանիայի հանդիպման հիմնական առանցքը եղել են հակաահաբեկչական կոալիցիայի անդամ երկրների միջազգային տեռորիզմի դեմ ուղղված ջանքերում անդրկովկասյան երեք երկրների համատեղ հնարավոր ներդրման շրջանակները: Այս առումով թբիլիսյան հանդիպման ընթացքում Ադրբեջանի Մեջլիսի նախագահը անընդունելի է համարել նման կարգի որեւէ համագործակցություն տարածաշրջանում, եթե հենց Անդրկովկասում՝ ի դեմս ԼՂ-ի, իբր, ահաբեկչության եւ թմրանյութերի կենտրոն կա, իսկ Հայաստանը հովանավորում է նման երկրի: Ըստ Արմեն Խաչատրյանի, ինքը համարժեք պատասխան է տվել, ըստ որի Ադրբեջանին կոչ է արել ոչ թե միջազգային հանրության առաջ անընդհատ լացել 1 մլն փախստականների, իրենց տարածքի գրավված 20 տոկոսի համար, այլ չվիրավորելով սեփական խաղաքաղաքացիներին՝ նրանց համար կեցության պայմաններ ստեղծել եւ բնակեցնել այն բնակարաններում, որոնք անհասույց թողեցին հայ բռնագաղթածները:

Այնուամենայնիվ, կողմերին հաջողվել է որոշակի ընդհանուր հայտարարի գալ, որի արդյունքը եղել է համատեղ հռչակագրի ստորագրումը, ըստ որի «Ուշադրություն դարձնելով 2001 թ. սեպտեմբերի 11-ի ողբերգական իրադարձություններին, որոնք մեկ անգամ եւս հիշեցնում են համաշխարհային նոր վտանգի՝ ահաբեկչության դեմ պետությունների անպաշտպանվածության մասին, գտնում ենք, որ մեր երկրները պետք է համատեղեն իրենց ունեցած բոլոր հնարավորությունները՝ միջազգային ահաբեկչության դեմ պայքարի ընդհանուր դիրքորոշման մշակման համար... Մեր պառլամենտները, ինչպես միշտ, պատրաստ են Հարավային Կովկասում առկա կոնֆլիկտների խաղաղ լուծմանը՝ ելնելով միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներից, քանի որ մենք համոզված ենք, որ կոնֆլիկտների հարթումը կնպաստի կյանքի բոլոր ոլորտներում համագործակցության զարգացմանը, որն անհրաժեշտ է ողջ տարածաշրջանի ծաղկմանը»: Դատելով հռչակագրից, պարզ է դառնում, որ առաջնահերթ է համարվում կոնֆլիկտի լուծումը, դրանից հետո միայն՝ տարածաշրջանային որեւէ համագործակցություն, ինչի մասին Ադրբեջանը խոսում է արդեն երկար տարիներ: Այս հարցմանն ի պատասխան Արմեն Խաչատրյանն ասաց. «Մենք պետք է զուգահեռ աշխատենք: Կան պայմանավորվածություններ, որոնք չեն ներկայացվել հռչակագրում: Դրանք վերաբերում են համագործակցության տարբեր շրջանակների՝ ստեղծելու հանձնաժողովներ, աշխատանքային խմբեր, մշտական հանձնաժողովներ, ստեղծելու ինֆորմացիոն կենտրոններ եւ այլն: Այսինքն՝ խոսքը չի վերաբերում հարցը միայն խաղաղական ճանապարհով լուծելուն: Այն կարծիքին եմ, որ առեւտրատնտեսական զարգացումների երաշխիքներ կստեղծվեն կոնֆլիկտի խաղաղ կարգավորման համար»:

Անհասկանալի է նաեւ, թե ինչպես կարելի է համընդհանուր դիրքորոշումներ ընդունել, երբ հակամարտող կողմերի՝ ահաբեկչությանը տրվող գնահատականները հակասում են միմյանց: **«Ազգի»** այս հարցմանն Աժ խոսնակը պատասխանեց. «Եթե Ադրբեջանն ասում է, թե Ղարաբաղն ահաբեկչության կենտրոն է, չի նշանակում, որ համաշխարհային հանրությունը, առավել եւս մենք, դա ընդունում ենք: Խոսքը միջազգային տեռորիզմի մասին է, եւ այս հարցում բոլորս համամիտ ենք, որ մենք ողջ խաղաղակիրթ աշխարհի կողքին պիտի կարողանանք մեր հնարավորությունները ներկայացնել»:

Քննարկվել է նաեւ տարածաշրջանի մեկ այլ՝ վրաց-աբխազական կոնֆլիկտի հարցը, որի շրջանակներում Արմեն Խաչատրյանի գլխավորած պատվիրակությունը հանդիպել է Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեի հետ: Երկրի նախագահն ասել է, թե իրենց եւս մտահոգում է հայ ազգաբնակչության խնդիրը, սակայն իրենք չեն կարող վերահսկել կոնֆլիկտի գոտին, որտեղ գործում են բանդիտական կազմավորումները: Վրաստանի ղեկավարության հետ քննարկվել է նաեւ Մառնեուլի շրջանի ճանապարհահատվածի՝ երթեւեկող տրանսպորտից գանձվող չափազանց բարձր վճարների հարցը, եւ Վրաստանի պետական նախարարը խոստացել է առաջադրված խնդրին ընթացք տալ:

ԳՈՌ ԱԲԲԱՍՅԱՆ

Հայտարարություն

ARMENTEL

2001 թ. հոկտեմբերի 11-ին եւ 12-ին համակարգչային սարքավորումների մատակարարման համար «Արմենտելի» հայտարարած մրցույթի վերջին ժամկետը երկարաձգվում է եւս 10 օրով:

Այդ կապակցությամբ առաջարկների ներկայացման վերջին ժամկետ է նշանակվում 2001 թ. նոյեմբերի 5-ը, ժամը 12:00-ն:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

«Արմենտելի» բաժանորդներին

ARMENTEL

«Արմենտելը» տեղեկացնում է իր բաժանորդներին, որ սույն թվականի հոկտեմբերի 22-ից բացվել է Գյումրի քաղաքի E 10 Alcatel թվային կայանի միջազգային ելքը:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՋՐՄՈՒՂ-ԿՈՅՈՒՂԻ ԷԿ ԵՐԵՎԱՆԻ

Երեւանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ն տեղեկացնում է, որ ջրամատակարարման դիմաց մայրաքաղաքի բնակիչների կողմից վճարումների խիստ ցածր մակարդակի պատճառով ընկերությունը ներկայումս հայտնվել է ծանր կացության մեջ:

Ֆինանսական միջոցների անբավարարությունը ոչ միայն խոչընդոտում է Երեւանում ջրամատակարարման եւ ջրահեռացման բարելավմանն ուղղված ծրագրերի իրականացմանը, այլեւ թույլ չի տալիս ժամանակին կատարել անհրաժեշտ վճարումները, մասնավորապես օգտագործած էլեկտրաէներգիայի դիմաց, ինչը ուղղակիորեն վտանգում է համակարգի անխափան գործունեությունը: Չնայած գործադրվող ջանքերին, ստեղծված պայմաններում ընկերությունը չի կարող երաշխավորել ազգաբնակչությանը հետագա կայուն ջրամատակարարում: Ավելին, բացառված չէ, որ հասանելիք միջոցների հավաքագրումն առաջիկայում ընկերությունը ստիպված լինի դիմել ծայրահեղ միջոցի. նվազեցնել առավել խոշոր պարտք ունեցող բնակելիներին մատակարարվող ջրի քանակը: Նշենք, որ Երեւանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ն ձեռնարկվող միջոցառումներն իրականացնում է Երեւանի քաղաքապետարանի հետ սերտ համագործակցելով:

Նման իրավիճակից խուսափելու համար Երեւանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ն կոչ է անում համաքաղաքացիներին շուտափույթ մարել ընկերությանը ունեցած պարտքերը եւ կանոնավոր կերպով կատարել ընթացիկ վճարումները: Պահանջվող գումարը՝ մեկ անձի հաշվով ամսական 420 դրամ, դուք կարող եք մուծել «Հայխնայբանկում», «Կրեդիտ-Երեւան» բանկում, «Հայփոստում», ինչպես նաեւ վճարել ընկերության հսկիչներին՝ համապատասխան փաստաթղթի առկայության դեպքում: Իսկ սեփական միջոցներով տեղադրելով ջրաչափ եւ վճարելով 56 դրամ 1 խմ-ի դիմաց, դուք ոչ միայն կնշտեսեք զգալի գումար, այլեւ կկարողանաք արդյունավետ կերպով վերահսկել ջրի սպառումը սեփական բնակարանում:

Միմիայն բոլոր շահագրգիռ կողմերի համատեղ միջոցներով է հնարավոր հաղթահարել առկա ճգնաժամը եւ ստեղծել պայմաններ համակարգի հետագա զարգացման համար՝ հանուն Երեւանցիների հարաճուն պահանջների բավարարման:

Երեւանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ
մամուլի ծառայություն

Armex

Հայաստանի Ֆոնդային Բորսա
Armenian Stock Exchange

2001 թ. հոկտեմբերի 25-ի առեւտրային նստաշրջան

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԳՆԱՆՇՈՒՄ

Թողարկող Issuer	Հատ. ABBR	Հարթակ Listed	Գնում՝ Bid			Վաճառք՝ Ask			Կատարված գործարքներ Transactions				
			լավագույն գին Best price	միջ. կշռ. գին Avg. price	ընդհանուր Total qnt.	լավագույն գին Best price	միջ. կշռ. գին Avg. price	ընդհանուր Total qnt.	նվազ. գին Day low	առավ. գին Day high	միջ. կշռ. գին Avg. price	փոփ.% Avg%	ծավալ (հազ. դրամ) Volume
ԱՐԴՎԻՆ ԷԼ.ՄԵԽ.ԳՆ (ՎԱՆԱՁՈՐ)	ARDV	B											
ԱՐՍԱԼՈՒՅՍ	ARSL	B											
ԱՐՏԵՔՍ	ARTX	B											
ԱՐՓԱՍԵՎԱՆ	ASEV	B	1,500.0	1,500.0	10								
ԱՍՏԿԱՍՍԵ (ԱՐՑԻԿ)	ASTM	B											
ԱՎՏՈԱԳՐԵԳԱՏՆԵՐԻ ԳՆ	AVAG	B											
ԱՎԻԱՀԱՄԱԼԻՐ	AVHM	B	90.0	90.0	80								
ԱՎՏՈԲԵՌՆԻՉ	AVTB	B											
ԱՎՏՈՄԱՏԻԿԱ ԳՆ	AVTM	B	300.0	300.0	1								
ԲՀԵՍ.ՊԼԱԶՄԱ	BHSP	B											
ՉԱՐԵՆՑ. ԳՈՐԾԻՔԱՇԻՆ. ԳՆ	CHGG	B											
ԿԱՊԻՏԱԼ ՄԵՆԵՋՄԵՆԹ	CPMT	B											
ԴԱՆԻՅԱԼԻ ԱՐՏ. ՋՐ. ՄԿ	DAJK	B											
ԴԱՍՏԱԿԵՐՏԻ ԲՈՒԺՏԵԽ. ԳՆ	DBJG	B											
ԴԱՆԻՅԱԼԻ ԱՌՈՂՋ. ՀԼ	DJAH	B											
ՁՈՒԼԱԿԵՆՏՐՈՆ	DZKT	B	400.0	400.0	10								
ԷԼԵԿՏՐԱՍԵՂԱՊԻՏԱԼՐ	ECHS	B											
ԷՋՄԻԱԾԻՆ ՍԱՐՔԱՇԻՆ. ԳՆ	ECSG	B											
ԵՐ. ԷԼԵԿՏՐԱՇԱՐԺԻՉՆԵՐԻ ԳՆ	EELJ	B											
ԵՐՖԻՐԵԶ	EFRZ	B	1,400.0	1,400.0	3								
ԵՐ. ՀԻԴՐՈՀԱՂՈՐԴԱԿ.ԳՆ	EHHG	B											
ԵՐ. ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՆ	EJWG	B											
ԵՐԿԱՔԵՏՆ-7	EKB7	B											
ԵՐ. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՔԻՄԻԱՅԻ ԳՆ	EKQG	B	400.0	400.0	100								
ԷԼԵԿՏՐԱՍՊԱՐԱՏ	ELAP	B	470.0	470.0	10								
ԷԼԵԿՏՐԱՍՈՆՏԺ	ELMJ	B											
ԵՂՎԱՐԴԻ ՍԱՐՇԱԿՈՇԻԿՆԵՐԻ Ֆ/Ս	EMKFCO	B	500.0	500.0	100								
ԷԼԵԿՏՐԱՍԵՔՍՊ	EMQR	B											
ԵՅՍՍ	EMTA	B											
ԷՋՄԻԱԾԻՆ ՊԼԱՍՏԱՍ. ԳՆ	EPLG	B											
ԵՐ. ԺԱՄԱՑՈՒՅՑԻ ԳՆ	ERJG	B	1,300.0	1,300.0	10								
ԵՐԿԱՔԵՏՆ	ERKB	B	1,000.0	1,000.0	50								
ԵՐ. ՇԱՄՊԱՅՆ ԳԻՆԻՆԵՐԻ ԳՆ	ESHG	B	410.0	410.0	114								
ԱՆԱՀԻՏ ՑԵԼ. ԳՆ (ԵՐԵՎԱՆ)	ETCG	B	1,000.0	1,000.0	17								
ՎԱՆ ԱՖ (ԵՐԵՎԱՆ)	EVAF	B											
ԵՐ. ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՆ - 1	EVGI	B											
ԱՆԻՎ	GANV	B											
ԳԵԳԱՄԱ	GGMA	B											
ԳՅՈՒՄՐՈՒ ՄՍՄ ՊԱՀԱԾՈՆԵՐԻ Կ/Տ	GMPG	B											
ՀԱՅԱԳՈՐԾԱԿ	HAGB	B											
ՀԱՇԻՉ	HASH	B	100.0	100.0	28,300								
ՀԱՏԻՍ	HATC	B											
ՀԱՅՇԻՆԱՏՈՆ	HATS	B	1,500.0	1,200.0	50								
Հ ԷՊ. ՀԱՅԱՍ ԳՐՈՒՊ	HEHG	B	450.0	450.0	10								
ՀԱՅԿԱԲԵԼ	HKBL	B											
ՀԱՅՔԻՄՄԵՔԵՆԱ	HOMO	B											
ՀԱՅՔ.ՇԻՆՆԱՇԱՐԴ	HSHN	B											
ԿԱՇԻ	KASH	B											
ԿԱՍՈՒՐՏՇԻՆ	KMSH	B											
ԿԱՆԱԿ	KNKA	B											
ՌԵԼԵ ԳՆ (ԿԱՊԱՆ)	KREL	B											
ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱՔԻ ԳՆ	MOER	B	2,220.0	2,220.0	5								
ՄԱՐՏՈՒՆԻՇԻՆ	MRSH	B											
ՄԵՐՇԱՄԱԿՈՎՅԱՆ	MSKV	B											
ՄՍՄԻՍ ՏԱԲԱԿ *	MSTB	B	400.0	400.0	5								
ՄԵՏՇԻՆ	MTSH	B											
ՆՈՒԲԱՐԱՇԵՆԻ ՏՐԻԿՈՏԱԺԻ Ֆ/Ս	NBTF	B											
ՆԵՅՐՈՆ	NERN	B											
ՊԼԱՍՏԻԿ	PLAS	B											
ՌԵԶԻՍՏՈՐ	RZTR	B											
ՍԵԼԵՆԱ	SELN	B											
ՇԻՆԱԵՔԵՆԱՄՈՐՈԳԻՍ	SHMN	B											
ԿԱՏԱՐՈՂ ՍԱՐՔ. ԳՆ	SKSG	B											
ՏՈՍՊ	TASP	B											
ՏԱՎՐՈՍ	TAVR	B											
ՈՒԿՐՇԻՆ	UKSH	B											
ՄԻԱՎՈՐՎԱԾ ԲԱՆԿ	UNBK	B											
ՎԱՆԱՁՈՐ ԿՈՇԻԿԻ Ֆ/Ս	VAKF	B											
ՎԱՆՇԻԿ	VSHK	B											
ՎԻՏԱՄԻՆՆԵՐԻ ԳՆ	VTMG	B				8,000.0	8,000.0	1,000					
ԵՐԵՎԱՆ.ԿԱՀՈՒՅՔ	YKHQ	B											
ԵՐ. ՌԵԼԵԻ ԳՆ	YRLE	B											

* Շրջանառված գնանշանների տրամաբանական հարթի մասին տեղեկություն առեւտրային նստաշրջանի փակման դրությամբ Բոլոր գները ՀՀ դրամով

Այլ տեղեկությունները հրապարակվում են ինտերնետային էջում www.armex.am

© Armex

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 25.10.2001 Գինը՝ 100 դրամ